

## ՎԱԼԵՐԻ ՊՈՒԱՅԷ ՀԱՆԴԵՍ ԵՎԱԾ Է ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԺԻՏՈՒՄԸ ՔՐԵԱԿԱՆԱՑՆՈՂ ՆՈՐ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹԵԱՄԲ

Ֆրանսայի խորհրդարանի Մարսելյն ընտրուած պատգամաւոր Վալերի Պուայէ կրկին հանդէս եկած է ցեղասպանութիւններու, որոնց շարքին՝ Հայոց ցեղասպանութեան ժխտումը քրէականացնելու նախաձեռնութեամբ:

Ֆրանսայի նախկին նախագահ Նիկոլա Սարքոզիի գլխաւորած «Ժողովրդական Շարժման Միութիւն» կուսակցութեան (UMP) անդամ Պուայէ Ազգային ժողովին առաջարկած է խորհրդարանական հետաքննչական յանձնաժողով ձեւաւորել, որպէսզի ուսումնասիրէ Ֆրանսայի Սահմանադրական Խորհուրդի կողմէ ցեղասպանութիւններու ժխտումը քրէականացնող նախկին օրինագիծը մերժելու պատճառները:

2012-ի Մայիսի վերջերուն Հայաստան այցելած Ֆրանսայի խորհրդարանի վերին Պալատի պատուիրակութեան անդամ Ֆիլիպ Մարինի, Երեւանի Հայոց ցեղասպանութեան Յուշահամալիր այցելելէ ետք յայտարարած էր, որ Ֆրանսայի նոր խորհրդարանի ձեւաւորումէն յետոյ նախկին նախագահ Սարքոզիին եւ գործող նախագահ Ֆրանսուա Օլանտին սատարող խորհրդարանական ուժերը կրկին Հայոց ցեղասպանութեան ժխտումը քրէականացնող օրինագիծ կը ներկայացնեն խորհրդարան, ուր հաշուի կ'առնուին Սահմանադրական Խորհուրդի նկատողութիւնները: «Նոր փաստաթուղթը, իրաւաբանական տեսակէ-



Ֆրանսայի խորհրդարանի անդամ Վալերի Պուայէ

տով պէտք է անվիճելի ըլլայ: Հիմնական նպատակը այն է, պէտք է պատժել մարդոց, որոնք Ֆրանսայի տարածքին կը փորձեն ժխտել Հայոց ցեղասպանութեան իրողութիւնը», - ըսած էր Ֆիլիպ Մարինի:

2011-ի Դեկտեմբեր 23-ին Ֆրանսիայի Ազգային ժողովը Հայոց ցեղասպանութեան ժխտումը քրէականացնող օրինագիծ ընդունած էր, որով կը նախատեսուէր զայն ժխտողներու համար սահմանել 45 հազար Եւրօ տուգանք եւ նուազագոյնը մէկ տարուայ բանտարկութիւն: Օրինագիծի հեղինակը Վալերի Պուայէն էր:

Օրինագիծին դէմ բողոք ներկայացուելէ ետք, Ֆրանսայի Սահմանադրական Խորհուրդը հետագային զայն նկատեց ոչ սահմանադրական:

## ՀՀ-Ն ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԻՆ ԱՌԱՋԱԴՐԵՑ ՆԱԽԱԳԱՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ



Սերժ Սարգսեան ՀՀ4 համագումարի ընթացքին

Հայաստանի իշխող Հանրապետական կուսակցութիւնը Դեկտեմբեր 15-ին կայացած իր 14-րդ համագումարի ընթացքին, միաձայն նախագահի թեկնածու առաջադրեց երկրի գործող նախագահ եւ Կուսակցութեան նախագահ Սերժ Սարգսեանին:

Թեկնածութեան հարցը քուէարկութեան դրաւ Ազգային ժողովի նախագահ Յովիկ Աբրահամեան:

«Որոշումը ընդունուեց միաձայն, մեծարգոյ նախագահ, սրտանց շնորհաւորում ենք Ձեզ Հայաստանի Հանրապետութեան նա-

խագահի թեկնածու առաջադրուելու կապակցութեամբ եւ համոզուած ենք, որ Ձեր գլխաւորութեամբ մեր քաղաքական թիմը նախագահական ընտրութիւններում կը հասնի յաջողութեան», - քուէարկութենէն ետք յայտարարեց Աբրահամեան:

Նախագահ Սերժ Սարգսեան իր շնորհակալական խօսքին մէջ ըսաւ, - «Ես վստահ եմ, որ մենք, ձեզ հետ միասին կարողանալու ենք շահել մեր ժողովրդի վստահութիւնը եւ ապագայ հինգ տարի-

Շարք էջ 4

## ԵՐԱՄԻՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ԿՈՉ Կ'ԸՆԷ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ԱՐԴԱՐ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Եւրոպայի Միութեան ընդլայնման եւ եւրոպական հարեւանութեան քաղաքականութեան հարցերով յանձնակատար Շտեֆան Ֆիւլէ ԵՄ-Հայաստան տարեկան համապարօնական նիստէն ետք կոչ ըրած է Հայաստանին՝ կազմակերպել ազատ նախագահական ընտրութիւններ:

Շտեֆան Ֆիւլէ ըսած է որ, Եւրամիութիւնը Հայաստանին կոչ կ'ընէ 2013-ի Փետրուարին արդար եւ թափանցիկ նախագահական ընտրութիւններ կազմակերպել՝ նկատի առնելով ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի առաջարկութիւնները, որոնք ներկայացուած էին Մայիսին կայացած խորհրդարանական ընտրութիւններու ժամանակ:

Եւրամիութեան խորհուրդը այս առթիւ իր տարածած հաղորդագրութեան մէջ ողջունած է ժողովրդավար կառավարման եւ մարդու իրաւունքներու ոլորտներուն մէջ մինչեւ այսօր Հայաստանի մէջ տեղի ունեցած յառաջընթացը, խրախուսելով պայքարը կոռուպցիայի դէմ եւ դատարաններու անկախութեան հարցով: Նաեւ յայտնի դարձաւ, որ Փետր-

ուար 18-ին տեղի ունենալիք նախագահական ընտրութիւններուն առթիւ Եւրոպայի Ապահովութեան եւ Համագործակցութեան Կազմակերպութեան ժողովրդավարական Հաստատութիւններու եւ Մարդու Իրաւունքներու գրասենեակի (ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ) դիտորդական խումբէն ներս կ'ընդգրկուին նոյնքան երկարաժամկէտ եւ կարճաժամկէտ դիտորդներ, որքան անցած Մայիսի խորհրդարանի ընտրութիւններուն ժամանակ: Դիտորդական առաքելութեան կազմէն ներս կը գտնուին 24 երկարաժամկէտ դիտորդներ, որոնք Հայաստան կը ժամանեն ընտրութիւններէն 14-16 օր առաջ: Կարճաժամկէտ դիտորդական առաքելութիւն իրականացնողները Հայաստան կը ժամանեն քուէարկութենէն մի քանի օր առաջ: Ընտրութիւններուն կը հետեւին 258 դիտորդներ:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը Հայաստանի նախագահական ընտրութիւններու ժամանակ դիտորդական առաքելութիւն իրականացնելու հրաւերը ստացած էր Դեկտեմբերի սկզբին՝ Հայաստանի կառավարութենէն:

## ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԼԻԲԱՆԱՆԻ ԲԱՆԱԿԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԻՆ ՀԵՏ



Զօրավար Ժամ Քահուաժի, Երեսփոխաններ Սերժ Թուրսարգիսեան եւ Սեպուհ Գալիֆաբեան

Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան պետական երեսփոխաններ Ընկ. Սեպուհ Գալիֆաբեան եւ Սերժ Թուրսարգիսեան այցելեցին Լիբանանեան Բանակի ընդհանուր հրամանատար զօրավար Ժամ Քահուաժիին, որուն հետ քննարկեցին երկրի ապահովական ընդհանուր կացութիւնը եւ տարբեր շրջաններու անվտանգութիւնը ապահովելու գծով՝ զինուորական հաստատութեան դերակատարութիւնը:

Անդրադառնալով Թրիփոլիի ու այլ շրջաններու մէջ վերջին հանգրուանին արձանագրուող դէպքերուն, երեսփոխանները զօ-

րակցութիւն յայտնեցին բանակի ձեռնարկած միջոցառումներուն եւ կոչ ուղղեցին զինուած ուժերու տիրապետութիւնն ու հեղինակութիւնը հաստատել երկրի ամբողջ տարածքին, կանխարգիլելու համար խռովութիւնները եւ զինեալ անկարգութիւնները:

Ընկ. Գալիֆաբեան եւ Թուրսարգիսեան Քահուաժիի հետ քննարկեցին նաեւ լիբանանեան ընդհանուր զարգացումները, դրուատեցին հրամանատարին աշխատանքը եւ յաջողութիւն մաղթեցին Լիբանանեան Բանակին՝ իր ազգանուէր գործին մէջ:

# ՊԵՏՈՒԹԵԱՆ ԴԻՉԱՅՆՈՎ ՍՐՈՒՐԱՆԸ

## ՅԱԿՈՐԲԱՂԱՆԵԱՆ

Լեւոն Զուրաբեանի եւ Վարդան Օսկանեանի գրոյցի գաղտնալսումը արժանացել է բազմաթիւ մեկնաբանութիւններ: Դրանք թերեւս դեռ շատ կը լինեն:

Հայաստանի պարագայում, տեղի ունեցածն ամենեւին աննախադէպ չէ: 2007 թուականի խորհրդարանի ընտրութիւնից առաջ հրապարակ նետուեց ՕԵԿ նախագահ Արթուր Բաղդասարեանի գրոյցի գաղտնալսման փաստը, երբ նա թէյել էր բրիտանացի դիւանագէտի հետ եւ նրան յորդորել, որ Արեւմուտքը պէտք է շատ կոշտ գնահատական տայ ընտրակեղծիքներին:

Ռոբերտ Քոչարեանն էլ, որ այն ժամանակ նախագահ էր, կոշտ գնահատական տուեց Արթուր Բաղդասարեանի քայլին՝ դա որակելով դաւաճանութիւն:

Ի դէպ, ներկայում գաղտնալսուած վարդան Օսկանեանն այն ժամանակ արտաքին գործերի նախարար էր: «Այստեղ միակ սենսացիան (ազդեցութիւն) այն է, որ ժողովրդի կողմից ընտրուած երկու պատգամաւոր հետապնդուում են, պետական ռեսուրսներ են վատնուում նրանց գաղտնալսելու համար», Facebook-ի իր աւանդական գրառումների շարքում, իր եւ Զուրաբեանի գրոյցի գաղտնալսման առումով նկատուած է Վարդան Օսկանեանը:

Նախկին արտգործնախարարն ըստ ամենայնի սխալուած է: Գաղտնալսման մէջ որեւէ սենսացիա չկայ, առնուազն այն պատճառով, որ հինգ տարի առաջ էլ գաղտնալսուել էր մէկ այլ պատգամաւոր՝ Արթուր Բաղդասարեանը: Ընդ որում, գաղտնալսել էր այն իշխանութիւնը, որի մաս էր Վարդան Օսկանեանը: Օսկանեանն իհարկէ չաչտարարել է, որ ինքը պատասխանատուութիւն չի կրում այդ տարիներին այլ պետական կառույցների որոշումների համար, բայց նա առնուազն զիտէ, որ գաղտնալսում եղել է նաեւ այդ իշխանութեան տարիներին, հետեւաբար այստեղ որեւէ «սենսացիա» չկայ նաեւ այդ առումով:

«Այն, ինչ արուել է, բացարձակապէս անընդունելի է, դատապարտելի է եւ անօրինական է: Ես կարծում եմ, որ իրաւապահ մարմիններն այս հարցին պէտք է հետամուտ լինեն եւ յայտնաբերեն ու պատասխանատուութեան ենթարկեն գրոյցը ձայնագրողներին եւ տարածողներին», գրում է Վարդան Օսկանեանը:

Իսկ ի՞նչ է արել Վարդան Օսկանեանը, որպէսզի պատասխանատուութեան ենթարկուեն Արթուր Բաղդասարեանին ձայնագրողները: Այդ տարիների արտաքին գործերի նախարարը, որ այսօր իր գաղտնալսումը համարում է հարուած պետութեան վարկին, Բաղդասարեանի գաղտնալսումն իրականացնողներին պատասխանատուութեան ենթարկելու համար գործնական որեւէ քայլ կատարել է: Իսկ գուցէ եթէ այդ գաղտնալսողները պատասխանատուութեան ենթարկուէին՝ յանուն պետութեան վարկը փրկելու, այսօր այլեւս չլինէի նոր գաղտնալսումներ:

Ի դէպ, այդպիսի դէպքերում, Վարդան Օսկանեանը նկատուած է,

որ ինքը քայլեր արել է, բայց ոչ հրապարակաւ: Օրինակ, նա այդպէս էր ասում նախկին արտգործնախարար Ալիկ Արզումանեանի հետապնդման եւ բանտարկութեան կապակցութեամբ՝ երբ Օսկանեանը դեռ արտգործնախարար էր: Նա նշում է, որ Ռոբերտ Քոչարեանի մօտ բազմաթիւ անգամներ բարձրաձայնել է Ալիկ Արզումանեանի մասին, բայց ոչ հրապարակաւ: Նոյն կերպ, «ոչ հրապարակաւ» փաստարկներն են նաեւ Մարտի 1-ին նրա դերակատարութեան կապակցութեամբ: Վարդան Օսկանեանը նշում է, որ ինքն իշխանութեան առաջ ինչ որ պայման է դրել յայտնի ասուլիսի դուրս գալուց առաջ, կամ իրեն ինչ որ այլ ինֆորմացիաներ են փոխանցած եղել, եւ այլն: Կրկին, առանցքը «ոչ հրապարակային» դաշտում է:

Այստեղ խնդիրը միայն Վարդան Օսկանեանի պահուածքն է: Նա ընդամէնը մէկն է Հայաստանի «ոչ հրապարակաւ» աւանդութային մշակոյթից: Պարզապէս նրա պարագան ներկայում առաւել քան խօսուում է, որովհետեւ նա այսօր «գոհ» է այն աւանդութի եւ մշակոյթի, որում մի ժամանակ ինքն էր «հետապնդող» թէեւ, խոշոր հաշուով, դատելով գոնէ ձայնագրութեան բովանդակութիւնից, դժուար է ասել, թէ «գոհ» Օսկանեանն է: Բայց, դա ընդամէնը մեկնաբանութիւնների ոլորտից է, իսկ այստեղ էական են փաստերը:

Իսկ փաստը գալիս է «ոչ հրապարակաւ» մշակոյթի աւանդութից, որ հաստատուած է Հայաստանի քաղաքական կեանքում՝ անկախութեան առաջին իսկ տարիներից:

Գաղտնալսում իրականացուած է թերեւս շատ երկրներում, նոյնիսկ զարգացած, ժողովրդավար պետութիւններում: Դա երեւի թէ յատուկ ծառայութիւնների աշխատանքի մի մասն է, եւ նաեւ դրա համար են նրանց այսպէս ասած ոչ պաշտօնական պիւտճէները: Լաւ է դա, թէ վատ, այլ հարց է: Բայց, դրանք յատուկ ծառայութիւններ են, որոնք յաճախ իրենց գործն իրականացնում են նաեւ ապօրինի միջոցներով:

Պարզապէս, զարգացած եւ քաղաքակիրթ երկրներում այդ ամէնը նրանց համար ընդամէնը գործիք է իրավիճակի վերահսկողութեան համար, որպէսզի արդէն օրինական լիազորութեան եւ իրաւասութեան դաշտում նրանք կարողանան հնարաւորինս արդիւնաւէտ կատարել իրենց պարտականութիւնները: Այսինքն, այդ գաղտնալսումներն, օրինակ, երբեք չեն դառնում հանրային սեփականութիւն, որովհետեւ դրանք իրենց հետ բերելու են առաջին հերթին պատասխանատուութիւն տուեալ կառույցի համար:

Այդպիսին է զարգացած երկրներում պետական եւ հասարակական մշակոյթը: Այն չի ընդունում «ոչ հրապարակաւ» տրամաբանութիւնը: Եւ այդ մշակոյթն առաջին հերթին ձեւաւորել են հենց քաղաքական ուժերը, դատարարակերպ այնպիսի հասարակութիւն, որը նաեւ հենց առաջին հերթին իրենցից է ամէն ինչում պահանջում լիարժէք հաշ-

Շաբ.ը էջ 18

# ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԻ ՀԻՆ ՈՒ ՆՈՐ ԽՈՍՏՈՒՄՆԵՐԸ

## ԴԱԽԻԹՄԱՆՈՒԿԵԱՆ

Սերժ Սարգսեանը ՀՀԿ համագումարում հնչեցրած նախընտրական ելոյթը բարձրաձայն երագելու տպաւորութիւն էր թողնում՝ առանց կոնկրետ փաստերի, թուերի ու յստակ խոստումների: Այս իմաստով Սերժ Սարգսեանի նախագահական խոստում 2013-ը շատ ու շատ բաներով տարբերում էր ինչպէս 2008 թուականի նրա նախագահական, այնպէս էլ 2012-ի խորհրդարանական ընտրութիւնների նախընտրական ելոյթից:

Սերժ Սարգսեանը խօսել է «Ապահով Հայաստանի» եւ այնտեղ ապրող բարեկեցիկ քաղաքացու մասին: «Ապահով Հայաստանի կարեւորագոյն հիմքը ապահովուած ընտանիքներն են: Մենք լուրջ նպատակներ պիտի ամրագրենք անտեսական, սոցիալական, մշակութային, կրթական, առողջապահական, տարածքային համաչափ զարգացման մեր քաղաքականութիւնների համար: Երիտասարդը տուն եւ աւելի լաւ կրթութիւն էր պահանջում, պետական ծառայողը՝ արժանապատիւ կեանք: Քաղաքացին պահանջում էր աւելի որակեալ հանրային ծառայութիւններ: Գործարարը պահանջում էր կանխատեսելի տնտեսական միջավայր եւ պակաս վարչարարութիւն: Գործազուրկը՝ աշխատանք: Աշխատողը՝ վստահութիւն վաղուայ օրուայ հանդէպ: Անապահովը՝ հնարաւորութիւններ: Ապահովուածը՝ յուսալիութիւն: Եւ իւրաքանչիւրը պահանջում էր արդարութիւն եւ անվտանգութիւն», -ասել է ՀՀԿ առաջնորդը: Իսկ ո՞րն է Սերժ Սարգսեանի պատկերացրած դէպի ապահով Հայաստան տանող ճանապարհը: Իբրեւ գործող նախագահ՝ Սերժ Սարգսեանը պարտաւոր էր 5 տարուայ կատարած աշխատանքի փաստացի արդիւնքով ապացուցել, որ «Ապահով Հայաստանն» իր համար սոսկ լոգոնոս է:

Յիշեցնենք, որ 2008 թուականին ՀՀԿ նախագահ, ՀՀ նախագահի թեկնածու Սերժ Սարգսեանը խոստացել էր, որ 2012 թուականին Հայաստանի քաղաքացին 2 անգամ աւելի բարեկեցիկ է պարելու: Ըստ այդմ այսօր՝ 2012 թուականին մանկավարժների, բժիշկների, պետական ծառայողների միջին աշխատավարձը պէտք է կրկնապատուած լինէր եւ կազմէր միջինը 200 հազար դրամ, 2 անգամ պէտք էր աւելացած լինէին նաեւ կենսաթոշակներն ու մնացած պիւտճէտային հիմնարկների աշխատավարձերը: Փաստ է՝ 2008 թուականին տրուած այս խոստումը Սերժ Սարգսեանը չի կատարել: Որպէս հիմնաւորում անընդհատ մատնանշում է տնտեսական ճգնաժամը, ինչին այս անգամ եւս լայնօրէն յղում է արուած, բայց դա պատճառ է, ոչ՝ հիմնաւորում: Ի՞նչ երաշխիք կայ, որ Սերժ Սարգսեանի ասած «Ապահով Հայաստանը» այս անգամ կը դառնայ իրողութիւն: Ի վերջոյ միշտ էլ կարելի է ցանկացած խոստում չկատարել, իսկ յետոյ հարիւրաւոր պատճառներ նշել, թէ ինչու այս կամ այն խոստումը չկատարուեց: «Ապահով Հայաստանի» հետ կապուած հարակուլութեանը արդիւնքներ են պէտք, ոչ թէ՛ պատճառներ:

Սերժ Սարգսեանը կատարած աշխատանքների վերաբերեալ հանրութեանը ներկայացնելու հարուստ նիւթ չունի: Ահա թէ ի՞նչ է նշել երկրի նախագահը որպէս ձեռքբերում՝ ուղղուած քաղաքացու բարեկեցութեանը. «Մենք հարիւրաւոր երիտասարդ ընտանիքների տուն ձեռքբերելու հնարաւորութիւն ընձեռեցինք եւ աղէտի գօտու հազարաւոր բնակիչների կարողացանք ապահովել նոր բնակարաններով: Ապահովաբար կան նոր համակարգերի ներդրման շնորհիւ կարողացանք աւելացնել պետական ծառայողների բարեկեցութիւնը: Կարողացանք հականօրէն բարելաւել մեր քաղաքացիներին մատուցող հանրային ծառայութիւնների որակը. նախկինում խնդրահարուց ծառայութիւններն այսօր հայաստանցուն մատուցուում են նոյնպիսի որակով ու վարչարարութեամբ, ինչպէս առաւել զարգացած ու քաղաքակիրթ երկրներում: Մենք կարողացանք զգալիօրէն բարելաւել նաեւ հայաստանցի սպառողների շահերի պաշտպանութիւնը: Կարողացանք երկրում վերջապէս իրականութիւն դարձնել անվճար ծննդօգնութիւնը եւ բուժօգնութիւնն անհամեմատ աւելի մատչելի դարձնել: Ժամանակակից որակեալ բժշկական ծառայութիւնները հասցրեցինք Հայաստանի մարզեր: Կարողացանք աշխատաւոր հայաստանցու համար ապահով ծերութեան երաշխիքներ ստեղծել՝ հիմք դնելով կենսաթոշակային կուտակային նոր համակարգին»:

Իրականում նշուածները դերակշիռ մասը ունի գործ չէ. Երբ Սերժ Սարգսեանը խօսում է երիտասարդ ընտանիքների տուն ձեռքբերելու հնարաւորութեան մասին,

Շաբ.ը էջ 18

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝  
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝  
ՏՕԲԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ  
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ

**MASSIS Weekly**  
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA  
1060 N. Allen Ave.  
Pasadena, CA 91104  
Phone: (626) 797-7680  
Fax: (626) 797-6863  
E-Mail: massis2@earthlink.net  
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)  
Published Weekly  
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:  
USA \$50.00, \$80.00 (First Class)  
Canada \$125.00 (Air Mail)  
Overseas \$225.00 (Air Mail).  
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid  
at Pasadena CA.  
Please Send Address Change To  
MASSIS WEEKLY

ՐԱՅԱՍՏԱՆ

ԼԵՒՈՆ ԶՈՒՐԱԲԵԱՆԸ ԵՒ ՎԱՐԴԱՆ ՕՍԿԱՆԵԱՆԸ ԴԻՄԵԼ ԵՆ ԳԼԽԱԴՈՐ ԴԱՏԱԽԱՁԻՆ



Լեւոն Զուրաբեան եւ Վարդան Օսկանեան Ազգային Ժողովի առջեւ տեղի ունեցած ցույցի մը ընթացքին

Ընդդիմադիր Հայ ազգային կոնգրէսի խորհրդարանական խմբակցութեան ղեկավար Լեւոն Զուրաբեանը եւ նախկին արտգործնախարար, «Բարգաւաճ Հայաստան» խմբակցութեան պատգամաւոր Վարդան Օսկանեանը դիմել են գլխաւոր դատախազ Աղուան Յովսէփեանին՝ իրենց առանձնագրոցի «ապօրինի գաղտնալսման» եւ ձայնագրութիւնը սոցիալական ցանցերում տեղադրելու փաստի առիթով քրէական գործ յարուցելու պահանջով:

Լեւոն Զուրաբեանը «Ազատութիւն» ռադիոկայանի հետ գրոցում տեղեկացրեց, որ դիմումը մոտաքաղաքէլ են Ազգային ժողովի քարտուղարութիւն, որտեղից էլ պէտք է այն ուղարկուի Գլխաւոր դատախազութիւն:

Համացանցում տեղադրուած եւ լրատուամիջոցներում մեծ աղմուկ բարձրացրած ձայնագրութեամբ դատախազութիւնը դեռ չէր գբաղուած՝ հիմնադրելով, որ Զուրաբեանը կամ Օսկանեանը յանցագործութեան մասին հաղորդում չեն ներկայացրել:

Այնուհանդերձ, որոշում է կայացուել դատախազին գրաւոր դիմել, որպէսզի տպաւորութիւն չստեղծուի, որ շահագրգռուած չեն մեղաւորների բացառապատման հարցում, «Ազատութիւն» ռադիոկա-

յանի հետ գրոցում մեկնաբանեց կոնգրէսի պատգամաւոր, գլխաւոր դատախազի նախկին տեղակալ Գագիկ Զհանգիրեանը:

Լեւոն Զուրաբեանն էլ, վկայակոչելով Ազգային անվտանգութեան ծառայութեան յայտարարութիւնը, որով ծառայութիւնը հերքեց իր որեւէ առնչութիւնը պատգամաւորների առանձնագրոցի գաղտնալսմանն ու ձայնագրութեան՝ համացանցում չախտուելուն, ընդգծեց՝ «Եթէ իրենք չեն, ապա թող գտնեն ով է»:

ՀԱԿ պատգամաւոր Գագիկ Զհանգիրեանը եւս ակնյայտ էր համարում, որ գրոցի գաղտնալսումն ու տարածումը յատուկ ծառայութիւնների գործն է, որքան էլ պաշտօնապէս հերքուած է նրանց առնչութիւնը: Նա չբացատրեց, որ կարող է հանդիպումը նաեւ տեսագրուած լինել:

Այն դիտարկմանը, թէ որոշ շրջանակներ կասկածում են, որ Օսկանեանը կարող է ձայնագրած լինել, քանի որ տարածուած ձայնագրութեան մէջ նա շատ քիչ էր խօսում եւ միայն Զուրաբեանին հարց տուողի դերում էր, Զհանգիրեանը հակադարձեց, որ հենց Օսկանեանի վրայ սլաքներն ուղղելու նպատակով յատուկ ծառայութիւնները կարող էին գրոցի հենց այդ մասը տարածուած լինել:

ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ՖՐԱՆՍԻԱՅԻ ՆՇԱՆԱԴՈՐ ԴԵՐԱՍԱՆ ԱԼԷՆ ԴԵԼՈՆԻՆ

Նախագահ Սերժ Սարգսեանն ընդունել է համաշխարհային կինոյի լեգենդներից մէկին՝ ֆրանսիացի նշանաւոր դերասան Ալէն Դելոնին, ով Երեւանում ներկայ կը գտնուի իր մասնակցութեամբ նկարահանուած «Շնորհաւոր Ամանոր, մայրեր» ֆիլմի պրեմիերային, տեղեկացնում են նախագահի գրասենեակի մամուլի ծառայութիւնից:

Սերժ Սարգսեանը ողջունել է հիւրին մեր երկրում՝ ուրախութեամբ նշելով, որ Ալէն Դելոնի ստեղծած կերպարները Հայաստանում եւս մեծ ճանաչում եւ ժողովրդականութիւն են վայելում, իսկ դարաւոր պատմութիւն եւ մեծ ներուժ ունեցող հայֆրանսիական ջերմ բարեկամական յարաբերութիւնները շարունակում են վերընթաց գարգանալ:

Ֆրանսիացի անուանի դերասանը շնորհակալութիւն է յայտնել ՀՀ նախագահին՝ ջերմ խօսքերի եւ



Ֆրանսացի նշանաւոր դերասան Ալէն Դելոն

հիւրընկալութեան համար, ընդգծել, որ Ֆրանսիայում մշտապէս շատ ուշադիր են եղել Հայաստանի նկատմամբ, յարգալից վերաբերմունք ունեն՝ նրա մշակոյթի, պատմութեան նկատմամբ եւ յատկ դիրքորոշում՝ 1915թ. Հայոց ցեղասպանութեան ճանաչման ու դատապարտման հարցում:

ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԸ ԸՆԴՈՒՍՈՒԹԵԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԹԵԿՆԱԾՈՒՆ ՉԻ ԼԻՆԻ

«Ժառանգութիւն» կուսակցութեան առաջնորդ Րաֆֆի Յովհաննիսեանը, «Ազատութիւն» TV-ի եթերում պատասխանելով Ֆէյսբուք սոցիալական ցանցի օգտատէրերից մէկի այն հարցին, թէ հնարաւո՞ր է, որ անկանխատեսելի քաղաքական զարգացումների հետեւանքով պաշտպանէք Սերժ Սարգսեանի թեկնածութիւնը, յայտարարեց՝ ոչ, հնարաւոր չէ:

Օգտատէրերից մէկն էլ գրել էր, - «ՀԱԿ-ում կարծես ընդգծուեց երկու մտեցում: Մի մասը ԲՀԿ-ի հետ էր տեսնում պայքարը, իսկ Նիկոլը եւ միւսները սկզբունքորէն դէմ էին այդ համագործակցութեանը: Հիմա յայտնի է բոլորին, որ ԲՀԿ-ն հետ կանգնեց պայքարից: Ու ՀԱԿ-ի այդ թեւը մնաց օղում: Հիմա հարցս՝ Նիկոլին ձեզ դաշնակից տեսնո՞ւմ էք»:

Րաֆֆի Յովհաննիսեանն ասաց, որ տեսնում է: Ինչ վերաբերում է այն հարցին, թէ ով կամ ովքեր կը լինեն գործող նախագահին հիմնական մարտահրաւէր նետողները, «Ժառանգութեան» առաջնորդը,

մասնաւորապէս, ասաց, - «Ես համարում եմ, որ գործող նախագահին հիմնական մարտահրաւէր նետողը կը լինեմ: Այն հաւաքական թեկնածութիւնը, որտեղ ես եմ մասնակցում որպէս շարքային մասնիկ, եւ կարծում եմ, որ դրանից յետոյ շատ բան կը փոխուի»:

«Առաջադրուելու էք նախագահական ընտրութիւններին, յատկ գիտակցելով, որ չէք ընտրուելու: Արդեօ՞ք այս քայլով ուզում էք պարզապէս դուրս գալ քաղաքականութիւնից եւ յարմար առիթ էք փնտրում դրա համար: Եթէ ոչ, ապա նախագահական ընտրութիւններից յետոյ ձեզ որտե՞ղ էք տեսնում», - հարցին «Ժառանգութեան» առաջնորդը պատասխանեց կարճ, որ ինքն իրեն տեսնում է միայն Հայաստանում:

Րաֆֆի Յովհաննիսեանը, պատասխանելով սոցցանցի օգտատէրերից մէկի հարցին, թէ հնարաւո՞ր է, որ ընդդիմութեան միասնական թեկնածուն լինի հենց ինքը, ասաց, որ՝ ոչ, դա բացառուած է:

«ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՉԵՆ, ԱՅԼՆՆՆԱԿՈՒՄՆԵՐ».- ԺԻՐԱՅՐ ՍԵՖԻԼԵԱՆԸ

«Սարգարապատ» ազգային-քաղաքական շարժման նախաձեռնող խմբի անդամ Ժիրայր Սէֆիլեանն «Ֆէյսբուք» իր անձնական էջում հետեւեալ գրառումն է արել՝ կապուած նախագահական ընտրութիւններին տարբեր թեկնածուների առաջադրումների հետ:

«Ի՞նչ կարիք կայ 10-րդ անգամ փորձել նոյն բախտը, եւ գլխով պատին կպնել: Բոլոր մտածող մարդկանց համար հասկանալի է՝ փակուղի է, ընտրութիւններ չեն, այլ նշանակումներ են, եւ վերանշանակուելու է հերթական անգամ, ի՞նչ կարեւոր է քանի թեկնածու մասնակցեց, միեւնոյնն է, յաղթողը պարզ է», - գրել է Ժիրայր Սէֆիլեանը:

Յիշեցնենք, որ «Սարգարապատ», կանխորոշուած համարելով խորհրդարանական ընտրութիւնների ելքը, քաղաքական ուժերին կոչ արեց չմասնակցել, իսկ նախագահական ընտրութիւններից առաջ էլ հանդէս եկաւ «Նախախորհրդարան» նախաձեռնութեամբ, որը ոչ այլինչ է, եթէ ոչ

«Սարգարապատի» կողմից տարուող այլընտրանքային իշխանափոխութեան ճանապարհային քարտեզ:

Ճանապարհային քարտեզի նպատակն է՝ հասնել Հայաստանում լեգիտիմ եւ անցնցում իշխանափոխութեան եւ համակարգափոխութեան: Ամբողջ գործընթացը պայմանականորէն բաղկացած է 2 փուլից:

«Առաջինը՝ լեգիտիմութեան չյաւակնող նախախորհրդարանի կազմաւորման ու գործունէութեան փուլն է, որի առաքելութիւնն է մասնագիտական եւ հանրային բաց մասնակցութեան ձեւաչափով մշակել եւ հաստատել ապագայ Հայաստանի պատկերացումը: Երկրորդ փուլում պէտք է կազմաւորուի ներկայացուցչութեան աւելի բարձր աստիճան ունեցող Հիմնադիր խորհրդարանը, որը հաստատուելու է նոր հանրապետութեան ռազմավարութիւնը եւ մշակելու դրա Սահմանադրութեան նախագիծը», - պատկերացնում է նախաձեռնութեան հիմնադիրը:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏՕՆԱՎԱՃԱՌ՝ ՍԻՐԻԱՅԱՅԵՐԻ ՀԱՄԱՐ

Սփիւռքի եւ Աշխատանքի ու սոցիալական հարցերի նախարարութիւնները անցկացրին աշխատանքի տօնավաճառ: Շուրջ 50 գործատուներ առաջարկում էին աւելի քան 230 աշխատատեղ:

Առաջարկուող թափուր աշխատատեղերը տարբեր են՝ արհեստներից սկսած մինչեւ սցենարիստներ ու տարբեր լեզուների մասնագէտներ:

Սիրիահայերից ոմանց համար աշխատանքի գտնելու ճանապարհին խոչընդոտ է հայերէնի թոյլ իմացութիւնը: Սոնիա ձենենեանը Հայկազում մենեջեր է եղել յայտնի ընկերութիւնների խանութներում, սակայն այստեղ չէր կարողացել աշխատանք գտնել հենց այդ պատճառով:

Վահէ Գոճիկեանը Հայկազում հիւրանոցի տնօրէն է եղել, բայց

Հայաստանում նրան այդ ոլորտում աշխատանքի չեն վերցնում՝ ուսերէնին չտիրապետելու պատճառով:

Նրա խօսքով՝ թէեւ Հայաստանի կառավարութիւնը որոշակի ջանքեր գործադրում է սիրիահայերի ինդիւրների լուծման համար, բայց իրենք դրա արդիւնքները չեն տեսնում:

Հայաստանի աշխատանքի եւ սոցիալական հարցերի փոխնախարար Սոնա Յարութիւնեանն իր ելոյթում նշեց, որ սիրիահայերին աշխատանքի տեղաւորելը Հայաստանի հեղինակութեան ինդիւրն է:

Հայաստանում այժմ աւելի քան 5 հազար սիրիահայ կայ, որոնց մեծ մասն անգործ է: Սփիւռքի նախարարութիւն դիմած 500 սիրիահայից այժմ աշխատանք ունի կէսը:

ԼՈՒՐԵՐ

ՇԱՌԼ ԱԳՆԱԼՈՒՐԸ ՊԵԿԻՆՈՒՄ ԶԱՆԴԻՊԵԼ Է ԶԱՅ ԶԱՄԱՅՆՔԻ ԶԵՏ



Շառլ Ագնալուրի հանդիպումը Պեկինի հայութեան հետ

Չինաստանում Հայաստանի Հանրապետության դեսպանությունում Դեկտեմբերի 13-ին կազմակերպուել է ֆրանկոֆոնիայի շրջանակներում կայացած Չինաստանում ֆրանսերէն լեզուի տարուայ փակման առիթով Պեկինի ժամանած Հայագրի մեծանուն երգիչ Շառլ Ագնալուրի հանդիպումը Պեկինում բնակվող հայութեան հետ, տեղեկացնում են Արտգործնախարարությունից:

Միջոցառմանը շուրջ 60 հայերի հետ մեկտեղ ներկայ են գտնուել նաև «Համաշխարհային մտաւոր խաղերին» մասնակցելու նպատակով Չինաստանում գտնուող անուանի հայ շախմատիստներ Լեոն Արոնեանը եւ Էլինա Դանիլ-էլեանը:

Ողջունելով հաւաքուածներին՝ Չինաստանում ՀՀ դեսպան

Արմէն Սարգսեանը Շառլ Ագնալուրին պատմել է Պեկինում բնակվող փոքրաթիւ հայ համայնքի մասին, որից յետոյ ներկաները բազմաթիւ հարցեր են ուղղել իրենց մեծանուն հայրենակցին:

Ձերմ միջուրուում անցած հանդիպման ընթացքում Շառլ Ագնալուրը ներկայացրել է իր կեանքից որոշ դրուագներ եւ պատմել տարբեր ժամանակներում յայտնի մարդկանց հետ ունեցած հանդիպումների մասին:

Կարեւորելով հայապահպանման խնդիրները՝ նա յորդորել է երիտասարդներին երբեք չկտրուել արմատներից:

«Դա է ուժ եւ կորով տալիս աշխարհի տարբեր երկրներում յայտնուած հայերին՝ դիմագրաւելու ցանկացած դժուարութիւններին», - ասել է Շառլ Ագնալուրը:

ԲՐԻԻՍԵԼՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՈՒԵԼ Է ԶԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ԵՄ-Ի ՄԻՋԵՒ ՄՈՒՏՔԻ ԱՐՏՕՆԱԳՐԱՅԻՆ ՌԵԺԻՍԻ ԴԻՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ ԶԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ

Դեկտեմբերի 17-ին Բրիւսելում տեղի է ունեցել Հայաստան-Եւրոպական Միութիւն համագործակցութեան խորհրդի 13-րդ նիստը: Նիստին մասնակցելու նպատակով Բրիւսել էր ժամանել Հայաստանի պատուիրակութիւնը՝ ԱԳ նախարար Էդուարդ Նալբանդեանի գլխավորութեամբ:

Եւրոպական Միութեան պատուիրակութիւնը գլխավորել են ԵՄ Խորհրդի նախագահութիւնը ներկայացնող Կիպրոսի արտաքին գործերի նախարար Էրաստո Կոզակու-Մարկուլիսը եւ Եւրոպական յանձնաժողովի Եւրոպական հարեւանութեան քաղաքականութեան եւ ընդլայնման հարցերով յանձնակատար Շտեֆան Ֆիւլէն:

Նիստին քննարկուել են երկկողմ համագործակցութեան օրակարգը, ամփոփուել են այս տարուայ ընթացքում կատարուած աշխատանքները, անդրադարձ է կատարուել յարաբերութիւնների զարգացման նպատակով ձեռնարկուելիք քայլերին, ինչպէս նաեւ տարածաշրջանային հարցերին:

Նոյն օրը Էդուարդ Նալբանդեանը, ԵՄ Խորհրդում նախագահող Կիպրոսի ԱԳ նախարար Էրաստո Կոզակու-Մարկուլիսը եւ ԵՄ ներքին գործերի յանձնակատար Սեպիլիա Մալմստրոմը ստոր

րագրել են Հայաստանի եւ ԵՄ-ի միջեւ մուտքի արտօնագրերի դիւրացման մասին համաձայնագիրը:

Համաձայնագրի շնորհիւ Հայաստանի քաղաքացիները աւելի պարզեցուած ընթացակարգով կը ստանան վիզաներ, ինչը կարեւոր քայլ է մուտքի արտօնագրային ռեժիմի ազատականացման ուղղութեամբ:

Էդուարդ Նալբանդեանը ընդգծել է, որ Հայաստանի կառավարութիւնը որոշում է ընդունել, համաձայն որի ԵՄ քաղաքացիները 2013թ. Յունուարի 10-ից կը կարողանան Հայաստան այցելել առանց մուտքի արտօնագրերի եւ յոյս է յայտնել, որ նոյնը կ'արուի ՀՀ քաղաքացիների համար Եւրոպական Միութեան կողմից:

Էդուարդ Նալբանդեանը, ԵՄ Խորհրդում նախագահող Կիպրոսի ԱԳ նախարար Էրաստո Կոզակու-Մարկուլիսը եւ Եւրոպական յանձնաժողովի Եւրոպական հարեւանութեան քաղաքականութեան եւ ընդլայնման հարցերով յանձնակատար Շտեֆան Ֆիւլէն ստորագրեցին նաեւ Շրջանակային համաձայնագրի արձանագրութիւն, որը հնարաւորութիւն կը տայ Հայաստանին մասնակցութիւն ունենալ ԵՄ ծրագրերում:

ԹՈՒՐԲԱԿԱՆ «ԹԱՐԱՖ» ԹԵՐԹԻ ԳԼԽԱՒՈՐ ԽՄԲԱԳԻՐ Է ՆՇԱՆԱԿՈՒԵԼ ՄԱՐԳԱՐ ԵՍԱԵԱՆԸ

Թուրքիայում բաւականին լուրջ թերթի համբաւ ունեցող «Թարաֆ» թերթի յայտնի խմբագիր Ահմեդ Ալթինը աշխատանքից հեռանալուց յետոյ պարբերականի գլխավոր խմբագրի պաշտօնակատար է նշանակուել մինչ այդ թերթի համակարգող աշխատող հայագրի Մարգար Եսաեանը:

Թուրքական «Սոլհապար» կայքի փոխանցմամբ՝ «Թատաֆ» թերթի սեփականատիրոջ կողմից տարածած յայտարարութեան մէջ նշուել է, թէ մինչ թերթի նոր գլխավոր խմբագիր նշանակելը Մարգար Եսաեանը կը լինի «Թարաֆ»-ի ժամանակակից գլխավոր խմբագիրը:

Նշենք, աւելի վաղ յայտնի էր դարձել, որ Մարգար Եսաեանը եւս դիմում էր գրել՝ թերթից դուրս գալու համար:



«Թարաֆ» թերթի նոր գլխավոր խմբագիր Մարգար Եսաեան

«Թարաֆ» պարբերականի արդէն նախկին գլխավոր խմբագիր Ահմեդ Ալթինը եւ այլ լրագրողներ մշտապէս գրել են Հայոց ցեղասպանութեան մասին:

ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԻ ՆԱԽԱԳԱՅԻ ԹԵԿՆԱԾՈՒ

Շարունակուած էջ 1-էն

ներու համար շարունակելու ենք պատասխանատուութիւն կրել Հայաստանի Հանրապետութեան զարգացման համար: Վստահեցնում եմ, որ այդ ընթացքում ես թոյլ չեմ տայ արարք, որի համար դուք կարող էք ամաչել»:

Համագումարին յայտնի դարձաւ նաեւ, որ Սերժ Սարգսեանի նախընտրական կարգախօսն է՝ «Դեպի ապահով Հայաստան»:

Մօտ մէկ ժամ տեւած ծրագրային ելուցի ընթացքին, Սերժ Սարգսեան ներկայացուց, թէ ինչ կը նշանակէ «ապահով Հայաստան»: Ընդգծելով, որ ապահով կարող է ըլլալ միայն «արդար

Հայաստանը»: Ան խօսեցաւ դատարաններու անկախութեան մասին՝ խոստանալով շարունակել արմատական բարեփոխումներ, որոնք կարճ ժամանակուայ ընթացքին քաղաքացիներուն համար կ'ապահովեն արդարադատութիւն:

Հանրապետական կուսակցութեան ղեկավարը խօսեցաւ նաեւ կոռուպցիայի եւ ամենաթողութեան դէմ տարուող պայքարի, դարաբաղեան հարցի խաղաղ կարգաւորման, Ռուսաստանի հետ դաշնակցային յարաբերութիւններու զօրացման, Միացեալ Նահանգներու հետ բարեկամական գործընկերութեան ընդլայնման եւ Եւրոպայի հետ մերձեցման քաղաքականութեան մասին:

ԶԱՅԱՍՏԱՆԸ 89-ՐԴՆ Է 104 ԵՐԿՐՆԵՐԻ ԹԻՈՒՄ

Democracy Ranking-ը ներկայացրել է 2012-ի ժողովրդավարական երկրների վարկանիշային աղիւսակը, որը կազմուել է 104 երկրների նկատուումով, 2007-2008թթ եւ 2010-2011 թթ տուեալների եւ 42 ցուցիչների հիման վրայ:

Ըստ այդմ՝ ցուցակը գլխավորում է Նորվեգիան: Տասնեակում իրար յաջորդում են համապատասխանաբար Շուեդիան, Ֆինլանդիան, Շուէյցարիան, Դանիան, Նիդեռլանդները, Նոր Զելանդիան, Գերմանիան, Իռլանդիան եւ Աւստրիան:

ԱՄՆ-ն 15-րդն է, Ճապոնիան՝ 20-րդը, Մոնղոլիան՝ 40-րդը, Հնդկաստանը՝ 72-րդը, Ռուսաստանը՝ 88-րդը:

Ժողովրդավարութեան բնագաւառում ամենամեծ աւազընթացը գրանցած երկրներն են Թունիսը, Բանգլադեշը, Լիբիան, Զամբիան, Պակիստանը:

ԹՈՒՐԲ ԼՈՐԲԻՍՏՆԵՐԸ ՈՐՈՇԵԼ ԵՆ ԲՈՂՈՔԵԼ ԱՇԽԱՐՀԻ 30 ԵՐԿՐՈՒՄ ՏԵՂԱԴՐՈՒԱԾ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՅՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ԴԵՄ

Թուրքիայի Լոբբիստական ռազմավարական հետազօտութիւնների կենտրոնը որոշել է բողոքի նոտաներ չղելու ակցիա սկսել ընդդէմ բոլոր այն պետութիւնների, ովքեր ճանաչել են Հայոց ցեղասպանութիւնը կամ Ցեղասպանութեան գոհերի յիշատակին նուիրուած յուշակոթողներ տեղադրել:

Կենտրոնի տարածած հաղորդագրութեան մէջ յիշեցուած է, որ աշխարհի 22 երկիր Հայոց ցեղասպանութիւնը ճանաչելու մասին հա-

մապատասխան օրէնք է ընդունել, իսկ Ցեղասպանութեան գոհերին նուիրուած յուշարձան կառուցուել է աշխարհի 30 երկրում:

Ընդհանուր առմամբ՝ աշխարհում Հայոց ցեղասպանութեանը նուիրուած 132 յուշակոթող կայ:

Թուրք լոբբիստներն ուշադրութիւն են հրաւիրել այն հանգամանքի վրայ, որ այդ յուշարձանների մօտ թուրքերը բողոքի ակցիաներ չեն կազմակերպել եւ սպառնացել են «խախտել լուրթիւնը»:

### ՀԱՐՑԱԶՐՈՅՑ

## «ՊԱԼԱՏԱԿԱՆ ՅԵՂԱՇՐՋՈՒՄ ԿԱՐՈՂ Է ԼԻՆԵԼ ՄԻԱՅՆ ԴՐՍԻ ԱԶԱԿՑՈՒԹԵԱՄԲ»

### ՄԻՐԱՆՈՅՇ ՊԱՊԵԱՆ

Մեր գրողակիցն է ՌԱՀՀԿ փորձագետ, քաղաքական վերլուծաբան Էդգար Վարդանեանը

Էդգար, գնում ենք «խաղաղ» նախագահական ընտրությունների հաշուի առնելով Գագիկ Ծառուկեանի յայտարարությունը, որ չի առաջադրուի, բայց եւ չի սատարի որեւէ թեկնածուի:

– Ինչպէս բազմիցս ասել եմ, Հայաստանի նման երկրներում ընտրութիւնների արդիւնքները ոչ լեգիտիմ կառավարիչները միշտ ջանում են որոշել «ընտրութիւններից» առաջ: «Ընտրութիւնների» ժամանակ նրանք ուղղակի հետեւում են, որ շեղումներ չլինեն: Դրա համար լուրջ ներկայանալին, միջկլանային կոնֆլիկտները, հակասութիւնները, որոնք կան օլիգարխիկ համակարգի ներսում, պէտք է հանգուցալուծուեն մինչեւ ֆորմալ ընտրութիւնները, հակառակ դէպքում «ընտրութիւնները» կը դառնան անկանխատեսելի, ինչը որեւէ կերպ չի կարող ընդունելի լինել ոչ լեգիտիմ կառավարիչների համար, քանի որ նրանք ոչ թէ ընտրութիւնների միջոցով են իշխանական լծակներին հասնում, այլ բոլորովին այլ, ստուերային գործընթացների արդիւնքում, իսկ «ընտրութիւնները» նրանց պէտք են ընդամենը ստուերային գործընթացներին քաղաքակիրթ տեսք տալու համար: Կարելի է ենթադրել, որ այսօր առաւել եւս օլիգարխիային անհրաժեշտ է, որ մինչեւ ընտրութիւններն ամէն ինչ յստակ լինի, քանզի քուէարկութեան ժամանակ, կամ դրանից յետոյ գագիկ «շտկումներ» անելու ռեսուրս նրանք կարծես թէ չունեն նրանց անհրաժեշտ են լուրջ ֆինանսական միջոցներ եւ արտաքին քաղաքական պրոտեկցիա, որը խոստացել է տրամադրել Արեւմուտքը, եթէ ընտրութիւններն անցնեն առանց լուրջ «շտկումների»:

– Արդեօք Ծառուկեանը չէ՞ր գիտակցում քաղաքականութեան մէջ իր ոչ կոմպետենտ լինելը:

– Իսկ ի՞նչ է, մնացած օլիգարխները կոմպետենտ են: Հայաստանում դասական քաղաքականութիւն չկայ, որ խօսենք նորմալ քաղաքականութեան մէջ կոմպետենտ լինելու-չլինելու մասին: Օլիգարխները տիրապետում են մեծ ռեսուրսների, եւ դա նշանակում է, որ օլիգարխիկ քաղաքականութեան մէջ նրանք շատ կոմպետենտ են, հակառակ դէպքում ասեւրի տնտեսա-քաղաքական ռեսուրսներ չէին ունենայ: Պարզապէս, ժամանակ առ ժամանակ առաջացող լուրջ «նազդերականների» արդիւնքում նոր վերաձեւումներ, վերաբաժանումներ են լինում:

Իմիջիայլոց, ԲՀԿ-ի այս քայլը եւս մէկ ցայտուն ապացոյցն է այն թէգի, որ Հայաստանում դասական առումով քաղաքական պայքար, քաղաքականութիւն գոյութիւն չունի իր բոլոր հետեւանքներով հանդերձ: Տեսէք, ֆորմալ առումով երկրորդ տեղը զբաղեցնող եւ, իր ասելով, 500 հազար ընտրագանգուած ունեցող, գլխաւոր քաղաքական նիւզմէյքեր դարձած ուժը յայտարարում է, որ նախագահական ընտրութիւններին որեւէ մասնակցութիւն չի ունենալու: Ինչպէ՞ս է դա հնարուոր: Եւ դա այն բանից յետոյ, երբ ԲՀԿ-



Քաղաքական վերլուծաբան Էդգար Վարդանեան

ն հաւաստիացնում էր, որ ինքը համար մէկ քաղաքական ուժն է Հայաստանում: Հիմա ի՞նչ, 500.000 մարդու կամքով է չմասնակցելու որոշումը կայացուել: Բայց չէ որ յայտարարում էր, որ ողջ հանրապետութիւնով մէկ ԲՀԿ-ականներն ասում են, որ իրենց թեկնածուն Գագիկ Ծառուկեանն է: Մի պահ պատկերացնենք՝ Միացեալ Նահանգներում, ասենք, Հանրապետական կուսակցութիւնը, կամ Ֆրանսիայում՝ Սոցիալիստական կուսակցութիւնը յայտարարեն, որ իրենք նախագահական ընտրութիւններին չեն մասնակցելու. դա ֆանտաստիկայի ժանրից է: Եթէ այդ երկրներում ժեւ մէկը, ինչ-որ մի լրատուամիջոց կատարող նման լուր յայտնի, ոչ մէկ լուրջ չի ընդունի այն, բոլորը կը հասկանան, որ դա կատակ է: Իսկ մեզ մօտ մարդիկ լսեցին ԲՀԿ-ի յայտարարութեան մասին, եւ ունէ մէկը չկասկածեց դրա իսկութեան վերաբերեալ:

– Ռոբերտ Քոչարեանը հնարաւոր է քաղաքականութիւն վերադառնայ, ի նկատի ունեն հենց ինքն առաջադրուի:

– Հիմք չունեմ կատեգորիկ կերպով բացառել իրադարձութիւնների նման զարգացումը, բայց պէտք է հասկանալ՝ ինչի՞ համար է նա մտնելու նման իրավիճակում «ընտրական գործընթացի» մէջ: – Ասեմք, որ իշխանութիւնը իրենց համար թանկ բան է:

– Այսինքն՝ ուզում էք ասել, որ ինքը ունի ուզում է պայքարել ընտրութիւնների ժամանակ նախագահական աթոռի համար, ինքը, ինչ է, չգիտի, որ ընտրութիւնները չէզոքացուած են, իր ժամանակ չէզոքացուած է ինչ ընտրութիւնները: Բնականաբար, այսօր «ընտրութիւնների» միջոցով նախագահի աթոռը վերցնելու որեւէ շանս նա չունի: Այլ բան, որ ասէք՝ ինքը մտնում է ակտիւ քաղաքական դաշտ, որպէսզի փորձ անի պալատական յեղաշրջում անել: Բայց այստեղ էլ հետեւեալ հարցն է առաջ գալիս. առաջինը՝ ինչո՞ւ դիմել նման ռիսկի, երբ ռուսական խոշոր ընկերութիւնում թոփմենեջեր ես աշխատում եւ լաւ ապրում: Եւ երկրորդ, արդեօք կայ նման օպերացիա անելու համար արտաքին քաղաքական աջակցութիւն: Ես կարծում եմ, որ առանց նման աջակցութեան մեր պայմաններում այդպիսի քայլեր անելը

գրեթէ անհնար է: Իսկ մենք այսօր տեսնում ենք, որ Արեւմուտքը ցանկութիւն չունի այլ օլիգարխիկ շրջանակի պաշտպանելու, հակառակը, այն գոյաբանում է ներկայիս կառավարիչներին եւրաինտեգրման առումով լաւ տեմպեր արձանագրելու համար: Կրեմլը, միգրացի, կը ցանկանար աջակցել Քոչարեանին, սակայն Մոսկուան հասկանում է, որ այդ դէպքում ինքը կարող է Արեւմուտքի հետ խնդիրներ ունենալ, ՌԴ-ն, այնուամենայնիւ, ԽՍՀՄ չէ բազմաթիւ առումներով: Բացի այդ, Սարգսեանից, եթէ նոյնիսկ ինչ-որ առումներով Կրեմլը դժգոհ լինի, սակայն տեսնում է, որ Հայաստանի ներկայիս վարչախումբը, ընդհանուր առմամբ, պակաս ռուսամէտ է:

– Քաղաքական դաշտը սնանկ է, Յայաստանն անյոյս երկիր է դարձել:

– Չեմ կարծում՝ անյոյս է: Եթէ վերջին ժամանակահատուածում որեւէ շարժ չլիներ, եթէ հասարակական որոշակի խմբեր որեւէ կերպ չփորձէին ընդվզել, այդ դէպքում ես կ'ասէի՝ գոնէ մօտակայ ժամանակահատուածի հա-

մար ամէն ինչ անյոյս է: Օրինակ՝ թուրքմենստանի, կամ, ասենք, Հիւսիսային Կորեայի հասարակութեան համար կարելի է ասել, որ առնուազն մօտակայ ժամանակահատուածի կտրուածքով անյոյս վիճակ է ստեղծուած դեմոկրատական փոփոխութիւններ անելու առումով: Որովհետեւ այդ երկրներում չկայ ունէ մէկը, որը հրապարակաջօրէն յայտարարի իր իրաւունքների մասին եւ փորձի ինչ-որ քայլեր կատարել իր իրաւունքների հաստատման ուղղութեամբ: Մեզ մօտ, տեսնում ենք, որ այս առումով այլ իրավիճակ է, եւ դա յոյս է ներշնչում:

Կարծում եմ, որ կարծ ժամանակահատուածում ռադիկալ քաղաքական փոփոխութիւնների հասնելու համար պէտք է սկսել փոքր ակտիւ խումբ ձեւաւորելուց, որն իր առջեւ այնպիսի խնդիր է դնում, որը կարող է լուծել հենց սեփական ուժերով: Ենթադրենք՝ իրաւական գիտակցութիւն ունեցող եւ ռադիկալ փոփոխութիւններ ցանկացող հինգ հոգի մի տեղ հաւաքում են եւ որոշում այնպիսի քաղաքական-քաղաքացիական բնոյթի խնդիր դնեն, որ հենց հինգ հոգով կարող են լուծել: Երբ լուծեն այդ խնդիրը, հետագայում նոր նման մարդիկ կը միանան, եւ արդէն այդ խումբը նոր, ընդլայնուած կազմով կարող է իր առջեւ դնել աւելի բարդ խնդիր, որն ի վիճակի է լուծել հենց այդ նոր կազմով: Եւ եթէ նոյն կերպ այդ գործընթացը շարունակուի, ապա, ի վերջոյ, հնարաւոր կը լինի ստեղծել չզօր դեմոկրատական շարժում: Ընդհանրապէս, ժողովրդավարացման համաշխարհային փորձը ցոյց է տալիս, որ հարկը հազարները պայքարի վերջում են միանում, երբ յաղթանակի համը գալիս է, երբ համեմատաբար փոքր խմբերն արդէն յաջողել են որոշակի քաղաքական-քաղաքացիական բնոյթի լուրջ խնդիրների լուծման առումով, հեղինակազրկել եւ թուլացրել են ոչ լեգիտիմ իշխանութիւններին:

### ՅՐԱՆՍԱ ԵՐԵՍՓՈՒՍԱՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԿԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՏԵՎԵՃԵԱՆ ՎԵՐԸՆՏՐՈՒԵՑԱՒ

Դեկտեմբեր 16ին Ֆրանսայի երեսփոխանական մասնակի ընտրութիւններու Բ. շրջանին, Փաթրիք Տէվէճեան հաստատեց Դեկտեմբեր 9ի առաջին շրջանի իր յաջողութիւնը (49,8%) եւ ի տարբերութիւն Յունիսի սեղմ յաղթանակին (191 ձայնի տարբերութեամբ, որ ջնջուեցաւ, այս անգամ լայնօրէն պարտութեան մատնեց Արմատական կեդրոն շարժումի իր մրցակիցը) Ժիւլիէն Լանտֆրիտը ձայներու 60,04%-ով: Այսպէսով, Տէվէճեան, Հօ-տը-Սէն նահանգի 13րդ ընտրաշրջանէն կը վերընտրուի երեսփոխան: Այս ընտրաշրջանին մէջ քուէարկողներու տոկոսը կազմած է միայն 36,05%. նախագահական ընտրութիւններուն, Հոլանտ հոս ստացած



էր ձայներու 52,65%ը: (ՆՈՐ ՅԱՌԱՋ)

www.massispost.com daily news updateds



# THE NEW YORK TIMES ՊԱՐԲԵՐԱԿԱՆԸ ՍՈՒՐԻԱՅԱՅ ԳԱՂՈՒԿԱՆՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ

# ԿԱՏԱԿԻՆ ԵՒ ԽԵԼԱԳԱՐԻՆ ԶՈՐՅԵՐԸ



Ամերիկեան հեղինակաւոր The New York Times յօդուած մը հրատարակած է «Սուրիոյ Պատերազմը հայերուն կրկին փախստական դարձուցած է» վերնագրով:

Խորհրդային նախկին հանրապետութիւններէն մէկուն՝ Հայաստանի մէջ, վերջերս բացուած Կիւրիկեան վարժարանէն ներս կը սորվին արաբերէն դասագիրքերով, որոնք պատճէնահանում են պատերազմական թէժ գոտիի վերածուած Սուրիայէն բերուած գիրքերու միակ հաւաքածոյէն, կը գրէ թերթը:

Այնտեղ դպրոցական ծրագիրը սուրիական է, ուսուցիչներ ու աշակերտները սուրիացիներ, որոնք սակայն նախ էթնիկ հայեր են եւ Սուրիոյ մէջ ընթացող քաղաքացիական պատերազմի հետեւանքով փախած են պատմական հայրենիք: Անոնց մեծ մասը երբեք հոն չէին եղած:

«Անոնք, որոնք այստեղ կու գան, անշուշտ կը ցանկան ետ վերադառնալ: Հայերէնը մեր լեզուն է, բայց մեր մշակոյթը սուրիական է: Դժուար է այստեղ գալը», ըսած է Կիւրիկեան վարժարանի տնօրէն Նորա Փիլիպոսեանը, որ ամրան Հալէպէն Երեւան տեղափոխուած է:

«Հալէպի մէջ երբ հայկական դրօշ կը տեսնէի, կը ցանկայի Հայաստան գալ: Այստեղ երբ Սուրիոյ դրօշը կը տեսնեմ, ես պարզապէս տուն կ'ուզեմ երթալ», իր այս ասպարէսներով կիսուած է վարժարանի 11 ամեայ աշակերտուհի Վանան:

Թերթը կը յիշեցնէ որ հայերու նախնիները մօտ 100 տարի առաջ փախած են ցեղասպանութե-

նէն եւ բարեկաջող բնակութիւն հաստատած Սուրիոյ մէջ, վերածնունդով որպէս ազգային փոքրամասնութիւններու բազմաթիւ խումբերէն մէկը, որոնք այնտեղ երկար ժամանակ գոյատեւած են համակեցութեամբ:

Սուրիահայերու փախուստը ստիպած է սփիւռքէն ուժեղ կախուածութեան մէջ գտնուող Հայաստանին զգոյշ ըլլալ իր հաշիւներուն մէջ: Հայաստանը մարդասիրական բեռներ կ'ուղարկէ Սուրիոյ մէջ գտնուող հայերուն՝ օգնելով անոնց մնալ ու գոյատեւել այնտեղ: Սակայն, միեւնոյն ժամանակ երկիրը կ'աջակցի բոլոր անոնց, որոնք ժամանակաւոր կամ մշտական բնակութեան համար Հայաստան եկած են: Անոնք արագացուած ձեւով տրամադրած են վիզաներ, կեցութեան եւ քաղաքացիութեան իրաւունքներ, կը գրէ պարբերականը:

Հայաստանի մէջ ապաստան գտած են շուրջ 6000 սուրիացիներ, այն բանէն ետք երբ մարտական գործողութիւնները հրոյ ճարակ դարձուցին Հալէպը: 120 հազար սուրիահայերու 80 հազարը կը բնակի Հալէպի մէջ:

Յօդուածագիրը կը շեշտէ որ սուրիահայերը պաշտօնապէս չէզոք դիրքորոշում ունին Սուրիոյ մէջ ընթացող քաղաքացիական պատերազմին մէջ: Անոնցմէ շատերն անհանգստացած են ապստամբներու իսլամիստական տրամադրութիւններով եւ կասկածանքով կը վերաբերուին Թուրքիոյ կողմէ անոնց ցուցաբերուած աջակցութեան համար:

Հայկական Սփիւռքի հայրե-

Շարք էջ 18

## ՄԵԹՐ ՊԱՐԳԵՒԻ ԱՒԻԹԵԱՆ

Աւստրալիոյ ռատիոկայաններէն մէկուն մէջ պաշտօնավարող գոյգ մը, Անգլիոյ թագուհիին եւ անոր զակին՝ Չարլզի հանգամանքն ու ձայնը կեղծելով, ծուղակի մատնեց Լոնտոնի հիւանդանոցներէն մէկուն պաշտօնեան, որ «ահաւոր» սխալ գործած էր՝ կեղծող գոյգին հեռաձայնը անցնելով դէքուհի Քէյթի հիւանդապահուհիին:

Կատակնկատող դէպքէն ետք, հիւանդանոցի պաշտօնեան անձնասպանութիւն գործեց եւ կեղծող գոյգն ալ անգործ դարձաւ: Կ'ըսուի թէ քննութիւն բացուած է ստուգելու համար, թէ ինչո՞ւ նման արարք մը անձնասպանութեամբ վերջ գտաւ:

Յաւալի լուրը տակաւին «հին» չդարձած, հոգեպէս եւ մտապէս խանգարուած ամերիկացի քսանամեայ երիտասարդ մը, Քրնէթիքըթ նահանգին մէջ գտնուող Նիւ-թաուն քաղաքի մանկապատանեկան դպրոց մը մտնելով սպաննեց քսան մատղաշ մանուկներ եւ վեց ուսուցչուհիներ:

In addition to education, many families struggle with health and social issues. Armenia is experiencing rapid depopulation. The government offers incentives and stipends for parents to have children, the monetary incentive increasing with each successive child. Unfortunately, some parents have children simply for the financial benefits, which engenders large families without the adequate resources and planning to take care of them.

Family ties are also strained. Fathers leave the country to find work elsewhere, usually in Russia, and send their earnings back to their wives and children in Armenia. All too often, however, fathers get caught up in their new lives and remarry with new children, forgetting or choosing not to send money back to Armenia. Single mothers carry a heavy burden in Armenia. Remittances help but they are not a long-term solution to the prob-

## AIWA Meets with Ambassador Heffern



Aiwa board members flank Libby and John Heffern, US ambassador to Armenia

Members of the Los Angeles Affiliate of the Armenian International Women's Association met Friday, Dec. 7, 2012 with Ambassador John Heffern and his wife Libby at an informal setting in the Glendale Central Library to discuss various issues of mutual interest. The AIWA group was comprised of four of the founding members of the LA Affiliate Elizabeth Agbabian, Flora Dunaian, Hermine Janoyan, Savey Tufenkian; President, Silva Katchiguan; Second Vice-President, Ani Aivazian; United Nations Representative, Joan Agajanian Quinn; Publicity and Board Liaison, Lily Balian and Board member Houry Aposhian.

The group focused on issues that were of interest to the mission of AIWA namely ways of empowering women in Armenia through the use of education and public awareness. The group emphasized the need of citizens for NGOs that work with government, and a government that will listen. Mrs. Katchiguan mentioned AIWA's affiliation with the Tufenkian Foundation and the resources available to those who need assistance. "We have a vested interest in encouraging women to recognize the value of their role in the family and society and to seek help

when their worth is devalued through gender discrimination, inequality and abuse."

The economy and ways to improve involvement of foreign based companies that could provide employment opportunities throughout Armenia for women and men were discussed. The group informed the Ambassador and his wife of AIWA's involvement with the American University of Armenia and its support of the Women's Entrepreneurship Program which provides education and small business grants to women. Other areas of mutual interest were mentorship and guidance programs for disadvantaged, physically and mentally challenged children and youths in different regions of Armenia. Joan Agajanian Quinn, worked mentioned the arts program sponsored by the Arts in Embassies sector of the US State Department, a program in which Mrs. Heffern herself is involved. One of the commissions in the US residence is painting by Jackie Kazarian from Chicago, organized by Ms. Agajanian Quinn.

The morning meeting came to a close when AIWA presented Ambassador Heffern with a gift of Alice Navasargian's book, "The Immortals."

lems. Remittances amounted to \$996 million in 2011, up from \$65 million in 1995. In 2011, remittances accounted for 10.63% of the nation's GDP.

Ms. Hovannisian discussed practical ways of addressing the problem of child poverty. She stated that together with her husband, Raffi K. Hovannisian, former Minister of Foreign Affairs of Armenia, they founded the NGO Orran in 2000. Orran (in Armenian: 'haven'), which began as a rented apartment in Yerevan, currently feeds over one hundred people daily, in addition to providing arts and crafts workshops as well as jobs.

In closing, Ms. Hovannisian presented a slideshow, which she calls "Shattered Dreams," about Ashkhen, a mother, depicting the everyday lives of poor Armenians. Ashkhen, a fruit and vegetable vendor, cannot support herself and her two children. As a result, her six-year-old son, Mishi, lives at a boarding school away from the family. Ashken's thirteen-year-old daughter, Susie, lives with her mother in their rented two-room apartment. "The greatest victim of poverty is the

mother," Ms. Hovannisian said. Alone with her two children, Ashkhen struggles to meet life's most basic needs: food and shelter. Sadly, Ashkhen is not a minority in Armenia.

The lecture concluded with a question and answer segment and calls for members of the Armenian Diaspora to aid their countrymen in the homeland. In her closing remarks, Ms. Hovannisian said: "You are at your tallest when you bend to help a child." Ms. Hovannisian stands very tall, indeed.

Armine K. Hovannisian, J.D., has served as Executive Director of Junior Achievement of Armenia, in Yerevan, since 1993. In 2000, she founded Orran, a charity NGO for children, and has served as the Chairperson of its Board since then. Mother of five children, she has served as advisor to various organizations and agencies, such as the Minister of Education of Armenia in 1998, and has received numerous awards for her civic activities, including the Fridtjof Nansen Medal in 2006. Hovannisian received her Juris Doctorate from UCLA School of Law in 1988.

# ԼՈՒՐԵՐ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԴՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻՈՅ Ա. ԵՒ Մ. ՅՈՎԱԵՓԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԵՆ



Դպրոցիս Ծնողաուսուցչական Մարմնի անշահախնդիր եւ անսակարկ նուիրումին իբրեւ արդիւնք յաջողութեամբ պատկուեցաւ վարժարանիս կազմակերպած այս տարուան առաջին ձեռնարկը՝ Հայկական Աշնանային Փառատօնը, որ տեղի ունեցաւ Հոկտեմբեր 26, 2012ին: Հաճելի սովորութիւն մը եղած է այս տօնախմբութիւնը, որ իր շուրջ կը համախմբէ դպրոցիս աշակերտները, ծնողներն ու բարեկամները դպրոցի ապահով շրջափակէն ներս: Զեռնարկին նպատակը հայ աշակերտները հեռու պահելն է մեզի համար խոտոր թուացող Հալոուինի տօնակատարութեան եւ անոր փոխարէն սոյն փառատօնին երեկոյեան ընթացքին խմբուելով տօնել աշնան մեզի պարզեւած բարիքները: Վարժարանիս բակը զեղեցկօրէն զարդարուած էր եւ տարբեր տեսակի տաղաւարներով շրջապատուելով կը տրամադրէր հարուստ ճաշատեսակներով սեղաններ եւ հետաքրքրական խաղեր: Դաստիարակչական բնոյթի մարզէն ներս այդ երեկոյ տեղի ունեցաւ Տիկնիկներու թատրոն, որը ներկայացուց մեր վարժարանի մեծ մայրերէն

կերպելն ու յաջողութեամբ պատկելը կը պահանջէ երկար ժամերու աշխատանք, ծրագրում եւ դասաւորում, որուն համար այստեղ արժանի կը նկատենք չիչելու Ծնողաուսուցչական կազմին ատենապետուհիին՝ Տիկ Ալին Պուլլուրճեանին եւ իր շուրջ համախմբուած բոլոր ծնողներուն տարած բծախնդիր աշխատանքը եւ սիրայօժար մասնակցութիւնը:

Գոհաբանութեան տօնին առթիւ, դարձեալ մեր Ծնողաուսուցչական Մարմնի կազմակերպութեամբ տեղի ունեցաւ ճաշկերոյթ, որուն հրաւիրուած էին վարժարանիս ամբողջ աշակերտութիւնը եւ ուսուցչական կազմը: Այս ձեռնարկին համար նախատեսուած բոլոր ճաշերը Ծնողաուսուցչական Մարմինը կը պատրաստէ եւ կը հիւրասիրէ, շնորհակալութիւն յայտնելով դպրոցիս տնօրէնութեան եւ ուսուցչական կազմին իրենց տարած անսակարկ նուիրումին համար: Սոյն ձեռնարկին Աշակերտական Խորհուրդին անունով խօսք առին երկու աշակերտուհիներ՝ Սարին Բամբալեանը Ը. կարգէն եւ Նայիրա Մարկարեանը Է. կարգէն, եւ ամբողջ աշակերտութեան անունով



մէկը՝ Տիկ Վարսեր Մարկարեանը իր թոռնիկներուն՝ Նայիրային եւ Աւուրին հետ, փոխանցելով մեր հայկական տօնախմբութիւններէն անպակաս եղող Ղափամային պատմութիւնը: Նոյն երեկոյեան տեղի ունեցաւ հայերէն գիրքերու վաճառք, որը շարունակուեցաւ յաջորդ շաբթուան ընթացքին: Սոյն վաճառքին, Մանկապարտէզէն մինչեւ Ը. կարգի աշակերտները գնեցին իրենց համար սահմանուած երկուքական գիրքեր, որոնք տարեշրջանի ընթացքին կ'ընթերցուին եւ գրական աշխատասիրութիւններ կը կատարուին անոնց վրան: Նման ձեռնարկներ կազմա-

իրենց երախտագիտական խօսքերը ուղղեցին նախ Աստուծոյ եւ ապա իրենց ծնողներուն, ուսուցիչներուն եւ տնօրէնութեան, որոնց շնորհիւ իրենք ապահով միջավայրի մը մէջ ծիլ կ'արձակեն ու կ'աճին, ստանալով անհրաժեշտ մտային եւ ֆիզիքական սնունդը: Դեկտեմբեր 7, 2012ին տեղի ունեցաւ վարժարանիս Մանկապարտէզէն Ը. կարգի աշակերտութեան կազմակերպչական խորհուրդի հանդիսութիւնը, եկեղեցույս Կիրակոս սրահին մէջ: Նոյն օրը առաւօտեան յարգեցինք չիչատակը 1988ի Հայաստանի երկրաշարժի զոհներուն, եւ չիչատակեցինք որ հայ ժողովուրդի պատմու-

թեան ընթացքին միշտ ալ տեղի ունեցած են չարաբաստիկ դէպքեր, բայց եւ այնպէս հայ ժողովուրդի ապրելու սէրն ու դժուարութիւնները դիմադրաւելու յատկութիւնը միշտ վերածնելու, վերանորոգուելու, դիմադրելու եւ յաղթահարելու մղած է մեզ: Այդ երեկոյեան մեր ամբողջ աշակերտութիւնը բեմ բարձրանալով ներկայացուցին կազմակերպչական յանգի եւ Ծննդեան զոյգ թեմաներով երգեր, արտասանութիւններ եւ թատրոն: Տօնական հաճելի եռուգեռ մը կար, ուր աշակերտներ հրեշտակներու վերածուած խաղաղութեան լուրը կ'աւետէին, մինչ ուրիշ խումբ մըն ալ կազմակերպեցին օգնական թղթակներու նմանութեամբ սրահին մէջ ուրախութեան եւ սօնախմբութեան մթնոլորտ մը կը ստեղծէին: Մանկամտրի Ամանտրի հանդէսը տեղի ունեցաւ Ուրբաթ, Դեկտեմբեր 14, 2012ին նոյն սրահէն ներս: Անմուտանալի ու չիչատակելի պահեր տրամադրեցին մեր մանկամտրի աշակերտները իրենց ծնողներուն, որոնք հպարտութեամբ եւ ուրախութեամբ կը հետեւէին իրենց զաւակներուն ներ-

Angeles Food Drive-ի կազմակերպութեան: Դարձեալ նոյն միտումով, հաճելի սովորութիւն մը դարձած է անսակարկ իրադրութիւնը նուիրելու կոչին (Pasadena Armenian Police Advisors Council): Աշակերտներուն մօտ կարեկցութիւն արթնցնելով եւ իրենցմէ աւելի կարիքաւոր եղող որբերուն եւ երախտներուն խաղալիքներ նուիրելու սովորութիւնը զարգացնելով, անոնց մօտ կը սերմանենք ազնուութիւն, բարեսիրտութիւն եւ բարեխղճութիւն, որոնք կարեւորագոյն յատկութիւններն են մաքուր նկարագրով իսկական քրիստոնեաներ կերտելու: Հաճելի երեւոյթ մըն է տեսնել աշակերտներ տոպրակներով խաղալիքներ կը նուիրեն եւ ամենայն գոհունակութեամբ եւ ուրախութեամբ կը յանձնեն այդ նուէրները լաւապէս զիտակցելով, որ իրենց ըրած արարքով պիտի ուրախացնեն իրենց տարեկից կարիքաւոր երախտները:

Կ'ուզենք նաեւ չիչատակել մեր Մարզական Բաժնի պատասխանատու մարզիչ պարոն Զարեհ Մանուկեանի ղեկավարութեամբ իրագործուած աննախընթաց երեւոյթ մը:



կայացումներուն, որոնցմէ ոմանք առաջին անգամ ըլլալով բեմ բարձրանալով ազատօրէն երգեցին, պարեցին եւ արտասանեցին մեր մայրենի լեզուով եւ վառ պահեցին մեր լեզուն եւ մշակոյթը: Տօնական այս օրերուն աշակերտներուն մօտ կարեւոր է արթնցնել զթալու զգացում եւ օժանդակելու գիտակցութիւն եւ ճիշդ այդ նպատակով, արդէն ճիշդ տարին ըլլալով, վարժարանիս Աշակերտական Խորհուրդը ձեռնարկեց ուսեստեղծի հաւաքի մը: Մի քանի շաբաթներու ընթացքին, Մանկապարտէզէն մինչեւ Ը. կարգի աշակերտները, ընդառաջելով Աշակերտական Խորհուրդի կոչին, դպրոց բերին 250 փառուսի ուսելիքի սուփեղէններ, որոնք յանձնուեցան Los

Մեր վարժարանի Է.-Ը. կարգի աշակերտուհիներու կողմից անցուցուած խումբը մասնակցեցաւ Փաստիւնային եւ Լա Գանիատայի շրջաններէն ներս գտնուող երեք անձնական օտար վարժարաններու կազմակերպած մրցաշարքերուն հանդիսանալով առաջին: Մարզիչներ՝ Պրն. Զարեհ Մանուկեանի եւ Պրն. Կէրի Մազաքեանի ղեկավարութեամբ եւ առաջնորդութեամբ մեր մարզիկներուն մօտ նշմարելի է յառաջդիմութիւն եւ կարողութեան բարելաւում: Վարձքը կատար բոլոր անոնց որոնք իրենց անսակարկ նուիրումով կը ծառայեն մեր յաջորդ սերունդին պատրաստութեան եւ կ'ապահովեն անոնց յարատեւ զարգացումը: Թղթակցութիւնը վարժարանէն

## ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

### ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՈՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly  
 Enclosed a check for (one year)  
 \* \$50,00 for USA  
 \* \$60,00 (second class), \$ 75,00 (Air Mail) for Canada.  
 \* \$85,00 (second class), \$ 125,00 (Air Mail) Overseas.

Name: -----  
 Address: -----  
 City: ----- State:----- Zip Code:-----  
 Country: -----  
 Tel :----- Fax :-----









### ԵՐԲԵՄՆ ԵՒ ԵՐԲԵՄՆ...

Երբեմն ականջ կը դնես խօսակցութեան: ...Ո՛չ, ըսել չեմ ուզեր թէ գաղտնաբար կ'ունկնդրես ուրիշին ըսածները: ...Ըսել կ'ուզեմ, թէ լուռ կը մնաս ու կը վայելես հոգիէդ ներս կատարուող անոնց խօսակցութեանց արձագանգը... Ժամերով, եւ չես ուզեր որ այդ խօսակցութիւնը ընդհատուի, որովհետեւ հաճոյք կ'առնես... Թէկուզ որ այդ պարզապէս երեւակայութեան ասպրոճ մըն է:

Երբեմն ներգործումներ կ'ապրիս... կ'այգանես, խոստում կ'առնես, դէմքդ թերեւս արցունքով լեցուն... ապա յանկարծ կ'անդրադառնաս, որ առանձին ես: Յաւալի չիշատակ մըն էր, որ գալով խանգարեց քեզի, սիրտդ ճգմեց ու հեռացաւ: Երբեմն շատ կ'ուրախանաս եւ ուրախութեանդ մէջ իսկ ցաւ կը զգաս: Զարմանալի... որովհետեւ առանձին ուրախացար եւ չկար մէկը՝ ուրախութեանդ բաժնեկցող: Երբեմն շուրջդ կը գտնուին ցակացած անձերէդ շատեր, սակայն չես ուզեր ոչ մէկը տեսնել... կը փափաքիս առանձնանալ:

Երբեմն կը շարունակես սխալին մէջ մնալ... միայն հետաքրքրուելով թէ ի՞նչ կրնայ պատահիլ: Տարօրինակ է այդ վիճակին մէջ ընթացքդ շարունակես, երբ լաւ գիտես որ սխալական ես:

Երբեմն անձ մը վնաս կը հասցնէ քեզի եւ դուն անմեղ սրտով կը նայիս իրեն ու կը ժպտաս, ապա կը զարմանաս, թէ ուրիշ ունիս այդ քաջութիւնը:

Երբեմն երազային վայրդ կը շինես աղիւս առ աղիւս եւ երբ գործը աւարտես... անակնկալ վայրկեանի մը մէջ վայրդ կը թողնես ու կը հեռանաս:

Երբեմն ամէն ինչ կը ծախես արժանապատուութեանդ սիրտին: Ուրիշներ զայն պարզ բան մը կը տեսնեն, կարեւոր չէ... դուն զայն արժանապատուութիւն կը տեսնես:

Երբեմն կը խնդաս, բայց սիրտդ քեզ լքողներուն հետ կ'ըլլայ:

Այն պահուն կը զգաս, թէ կեանքը անհամ է: Մինչեւ ե՞րբ պիտի յոգնիս, երբ որ գիտես կեանքի դառնութիւնները:

Քի դառնութիւնները: Երբեմն կը փափաքիս արտայայտուիլ քեզ յոգնեցնող գաղտնիքիդ մասին, լեզուիդ ծայրը կուզայ... սակայն ետ կը քաշես, տակաւին կը վախնաս... լուռութիւնը աւելի յարմար է քեզի, կը նախընտրես մնալ գաղտնապահութեան հոլին մէջ:

Երբեմն սիրած անձիդ հետ կը ճամբորդես, սքանչելի պահեր կը վայելես, կ'ուրախանաս, կը ցատկոտես, աշխարհը կը մոռնաս, կը զգաս թէ իր հետ ըլլալով ամէն ինչ շահած ես: Սակայն այդ շահէն ետք ամէն ինչ կը կորսնցնես, այդ պահուն անձ մը քեզ կը կանչէ... եւ երազդ վերջ կը գտնէ:

Երբեմն կը համբերես ամէնէն դժուարին պարագաներուն մէջ... մինչ ամէնէն պարզերուն մէջ ինքզինքդ տկար կը գտնես:

Երբեմն գրիչը կ'առնես ու կը գրես... մէկ կամ երկու օր ետք կը զարմանաս, թէ ինչպէ՞ս այս բոլորը գրած ես:

Երբեմն կը ցանկաս, որ ժամացոյցին սլաքները դէպի ետ երթան, որպէսզի տեսնես կարօտցած անձերդ: Երբեմն կը կարօտնաս ու կը փնտռես սիրած անձերդ, գիտնալով որ իրենք քեզ չեն յիշեր:

Երբեմն աչքերդ կ'արցունքոտին... կը ցաւիս ու կը յուսաս, որ մէկը գայ ու սրբէ տխուր արցունքդ:

Երբեմն կը ժպտաս եւ կ'ուրախանաս, մինչ սիրտդ վախէն կը դողայ այդ թաքուն օտար վիճակին ազդեցութեան տակ:

Երբեմն բարձրաձայն կը պոռաս... սակայն կը զիտակցիս, թէ ոչ ոք քեզի կը լսէ:

Երբեմն ուրախութեան կ'արտասուիս, թէ եւ վատահ էս որ սրտիդ մէջ տխրութիւնը կը բնակի:

Երբեմն կը քայքայուիս ցաւերէդ, կարօտէդ ու հոգեբէրէդ... եւ ասով հանդերձ ոչ մէկ բան կ'արտայայտուիս: Երբեմն կ'ապրիս... թէ եւ վատահ էս որ շատ վաղուց հրաժեշտ տուած ես կեանքին:

Տարօրինակ են այս «երբեմն»ները... սակայն ամէն պարզապէս մեր «երբեմն»ներն են:

### ԿՈՉ ԱՇԽԱՐՀԱՍՓԻՌ ԴԱՅՈՒԹԵԱՆԸ

Շարունակուած էջ 15-էն

Եւ կարեւոր նշանակութիւն ունենայ եւ ոչ թէ քաղաքական յանցաւոր անտարբերութիւն դրսեւորուի:

բ/ Սոյն նամակ-կոչով պիտի ջանամ՝ ի հեճուկս պատկան մարմիններին, այն դարձնել պետական սեփականութիւն: Այս առումով ակնկալում եմ աշխարհասփիւռ հայութեան, հայկական բարեգործական հիմնադրամների, հայկական գործարար շրջանակների, ազգային կառույցների, անհատ մեկենասների, աշխատաւորական կոլեկտիւնների, ուսանողութեան, Նախիջեւանի պատմութեան եւ մշակույթի, պատմաքաղաքական խնդիրներով շահագրգռուած պետական եւ ոչ պետական կազմակերպութիւնների դրամական աջակցութիւնները:

գ/ Արխիւի պետականացման գործընթացի բոլոր փաստաթղթերը եւ նուիրատուների ցանկը հրատարակուելու է առանձին գրքոյկով: Այդ իսկ պատճառով խնդրում է բոլոր նուիրատուներին փոխանցումները կատարելիս ամբողջութեամբ նշեն իրենց անուն-ազգանուններն ու կազմակերպութիւնների անունները եւ կատարեն «Նախիջեւանի արխիւին» նշումը:

դ/ Յարգարժան բարեկամներ, կարեւորէք այս խնդրանքս եւ հնարաւորութիւնների սահմաններում Ձեր դրամական աջակցութիւնները փոխանցէք հետեւեալ հաշուհամարին.

**ԱՄՆ-ի դոլարով.**  
 BENEFICIARY AYVAZYAN ARGAM ACC; 2470100116060100  
 BENEFICIARYS BANK ARDSHININVESTBANK« ARMENIA  
 SWIFT Code: ASHBAM22  
 INTERMEDIARY BANK CORR© ACCOUNT: No© 36209105 with  
 CITIBANK, NEW YORK SWIFT Code: CITIUS33  
**Եւրոյով.**  
 Correspondent Bank: DEUTSCHE BANK AG FRANKFURT, GERMANY  
 SWIFT: DEUTDEFF  
 Beneficiary Bank: ANELIK BANK CJSC BAGHRAMYAN BRANCH YEREVAN, ARMENIA SWIFT : ANIKAM22  
 Beneficiary: Ayvazyan Argam  
 Beneficiary Account: 11800046484200  
 Լրացուցիչ տեղեկութիւնների համար կարելի է կապ պահպանել. Հեռ. 091 78-80-33, E-mail. argamaivazian @ aol. com

**ԱՐԳԱՄ ԱՅՎԱԶԵԱՆ**  
 Հայագէտ-նախիջեւանագէտ,  
 ՀՀ նախագահի մրցանակաբաշխութեան հուլիսի տար գիտութիւնների  
 բնագաւառի 2010թ. մրցանակակիր

**DOWNLOAD NOW**

Available on the **App Store**

Available on **Android Market**

**SEROP'S CAFE**  
**GREEK & LEBANESE FOOD**  
 SERVING BATON ROUGE SINCE 1979

UNITED STATES POSTAL SERVICE® (All Periodicals Publications Except Requester Publications)		
1. Publication Title	2. Publication Number	3. Filing Date
MASSIS WEEKLY	0 6 6 7 - 3 3 0	12-30-12
4. Issue Frequency	5. Number of Issues Published Annually	6. Annual Subscription Price
WEEKLY, except two weeks in August	50	\$50
7. Complete Mailing Address of Known Office of Publication (Not printer) (Street, city, county, state, and ZIP+4®)		Contact Person
1060 N. ALLEN AVE. PASADENA, CA 91104		Telephone (Include area code) 1-626-797-7680
8. Complete Mailing Address of Headquarters or General Business Office of Publisher (Not printer)		
1060 N. ALLEN AVE. PASADENA, CA 91104		
9. Full Names and Complete Mailing Addresses of Publisher, Editor, and Managing Editor (Do not leave blank)		
Publisher (Name and complete mailing address)		
DR. ARSHAG KAZANTJIAN 1060 N. ALLEN AVE. PASADENA, CA 91104		
Editor (Name and complete mailing address)		
DR. ARSHAG KAZANTJIAN 1060 N. ALLEN AVE. PASADENA, CA 91104		
Managing Editor (Name and complete mailing address)		
VAHE ACHABAJIAN 1060 N. ALLEN AVE. PASADENA, CA 91104		
a. Total Number of Copies (Not press run)		3,500
b. Paid Circulation (By Mail and Outside the Mail)		3,500
(1) Mailed Outside-County Paid Subscriptions Stated on PS Form 3541 (Include paid distribution above nominal rate, advertiser's proof copies, and exchange copies)	123	123
(2) Mailed In-County Paid Subscriptions Stated on PS Form 3541 (Include paid distribution above nominal rate, advertiser's proof copies, and exchange copies)	383	383
(3) Paid Distribution Outside the Mail (Including Sales Through Dealers and Carriers, Street Vendors, Counter Sales, and Other Paid Distribution Outside USPS®)	2,400	2,400
(4) Paid Distribution by Other Classes of Mail Through the USPS (e.g., First-Class Mail®)	66	66
c. Total Paid Distribution (Sum of 15b (1), (2), (3), and (4))		2,972
d. Free or Nominal Rate Distribution (By Mail and Outside the Mail)		375
(1) Free or Nominal Rate Outside-County Copies Included on PS Form 3541	40	40
(2) Free or Nominal Rate In-County Copies Included on PS Form 3541	35	35
(3) Free or Nominal Rate Copies Mailed at Other Classes Through the USPS (e.g., First-Class Mail®)		
(4) Free or Nominal Rate Distribution Outside the Mail (Carriers or other means)	300	300
e. Total Free or Nominal Rate Distribution (Sum of 15d (1), (2), (3), and (4))		375
f. Total Distribution (Sum of 15c and 15e)		3,347
g. Copies not Distributed (See Instructions to Publishers #4 (page R3))		153
h. Total (Sum of 15f and g)		3,500
i. Percent Paid (15c divided by 15f times 100)		88.7%
16. Publication of Statement of Ownership		
<input type="checkbox"/> If the publication is a general publication, publication of this statement is required. Will be printed in the _____ issue of this publication.		
<input type="checkbox"/> Publication not required.		

### ՊԵՏՈՒԹԵԱՆ ԴԻՉԱՅՆՈՎ ՍՐՃԱՐԱՆԸ

Շարունակում էջ 2-էն

ուետուողականութիւն: Այդպիսով, նրանք հասարակութեան պահանջներն են իրենց հանդէպ խտացրել, բայց միեւնոյն ժամանակ իրենց էլ ապահովագրել են «հակամշակոյթի» հետեւանքներին:

Հայաստանում, քաղաքական ուժերն են առաջին հերթին խորացնում «ոչ հրապարակաւ» մշակոյթը, հասարակութիւնից պահանջելով միայն «վատահել» ու «հաւատալ», աւելորդ հարցեր չտալ, չկասկածել, հասկանալ, որ ամէն ինչ չէ, որ կարելի է հրապարակաւ անել, որ երբեմն մի բան պէտք է ասես, մէկ այլ բան անես:

Ահա այդ մտածողութիւնն ու մշակոյթը լեզուի մասնակցում են նաեւ գաղտնիստումները: Այդ իսկ պատճառով էլ հանրային հետաքրքրութիւնն այդպիսի դէպ-

քերում առաւել մեծ է լինում, քան գաղտնալսողի պատասխանատուութեան հանրային պահանջը:

Այդ իսկ պատճառով, փոխուում են ընդամենը սուբիեկտները: Օրինակ, պայմանական ասած՝ երէկ Օսկանեանն էր «գաղտնալսում» Արթուր Բաղդասարեանին, այսօր «Արթուր Բաղդասարեանն» է գաղտնալսում Օսկանեանին: Օսկանեանն ու Բաղդասարեանը սուեալ դէպքում ընդամենը իշխող վարչակազմերի խորհրդանիշներն են: Վաղը մի գուցէ նրանք էլի փոխուեն տեղերով, բայց միեւնոյն է՝ «սրճարանը» մնալու է անփոփոխ, որովհետեւ բոլորը միասին՝ այդ թուում եւ այն վարչակազմը, որի «խորհրդանիշն» է Լեւոն Զուրաբեանը, ոչ թէ պետութիւն են կառուցել՝ այլ պետութեան դիզայնով կառուցել են «սրճարան»:

«ԼՐԱԳԻՐ»

### ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԻ ՀԻՆ ՈՒ ՆՈՐ ԽՈՍՏՈՒՄՆԵՐԸ

Շարունակում էջ 2-էն

նա չգիտի, որ չնչին աշխատավարձ ստացող երիտասարդի համար այդ հնրաւորութիւնը անիրական է, քան որ նա չի կարողանում վճարել ո՛չ բնակարանի համար պահանջուող կանխավճարը, ո՛չ էլ հիպոթեքային վարկի տոկոսները: Երբ Սերժ Սարգսեանը խօսում է աղէտի գոտու հազարաւոր բնակիչներին նոր բնակարաններ տալու մասին, չի կարծում, որ երկրաշարժից 24 տարի անց հազարաւոր մարդիկ դեռ տնակներում չպէտք է ապրէին: Կամ ի՞նչ է նշանակում պետական ծառայողների բարեկեցութիւն՝ ապահովագրական նոր համակարգերի շնորհիւ. ոչ մի ապահովագրութիւն չի կարող բարելաւել միջինը 100 հազար դրամ ուճիկ ստացող պետծառայողի բարեկեցութիւնը, դա ոչինչ է այդ նոյն պետծառայողին 5 տարի առաջ տրուած խոստման համեմատ: Ի՞նչ

նկատի ունի Սերժ Սարգսեանը ասելով, թէ բարելաւուել է մեր քաղաքացիներին մատուցուող հանրային ծառայութիւնների որակը. ինտերնետի եւ նոր տեխնոլոգիաների շնորհիւ, բնականաբար, ինչ-որ առաջընթաց եղել է, բայց դա ժամանակի պարտադրանք է, որը առանձնապէս կապ չունի իշխանութեան լաւ կամ վատ աշխատանքի հետ: Միակ բանը, որը ռեալ արուել է, թերեւս անվճար ծննդօգնութեան ծառայութիւնն է եւ վարորդների ամրագոտիներ կապելու կարգապահութիւնը, իսկ դա, խոստովանենք, 5 տարուայ համար շատ չէ:

Յաւօք ստացուել է այնպէս, որ միակ «տեսանելի արդիւնքը» մնացել է ընտրակաշառքը, ինչին անվերապահօրէն սկսել է հաւատալ Հայաստանի ընտրողը եւ որի արդիւնքը հերթական ընտրութիւնից յետոյ առաւել ակնառու է դառնում:

«ՀԱՅԵԼԻ»

### ՍՈՒՐԻԱՅԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ

Շարունակում էջ 6-էն

նադարձութեան կողմնակիցները կը հաստատեն որ Սուրիոյ կորուստը ձեռքբերում կը դառնայ Հայաստանի համար: Անոնք կը կարծեն, որ սուրիացիները, որոնց մէկ մասը կիրթ, հարուստ, ձեռներէց եւ բարձր որակաւորում ունեցող աշխատողներ են, կ'օգնեն թոյլ տնտեսութիւն ունեցող յետ խորհրդային պետութեան:

Սուրիացիներէն քիչերն են շտապել Հայրենիք վերադառնալու կոչերուն արձագանգել, այն բանէն յետոյ, երբ Հայաստանն անկախացաւ 1991 թուականին, կը շարունակէ թերթը: Անոնք ինքզինքնին սուրիացի կը համարեն, կը խօսին արաբերէն եւ արեւմտահայերէն: Անոնցմէ շատեր գումարներ նուիրաբերած են օգնելու երիտասարդ պետութեան, յատկապէս Ատրպէյճանի հետ պատերազմի ժամանակ, որն աւարտած է 1994 թուականին, սակայն կայծերը դեռ չեն մարած:

«Անոնք կ'ուզեն ինծի «Հայրենադարձ»ի պիտակ փակցնել:

«Ես վտարանդի սուրիացի եմ», ըսած է հալէպցի լրագրող Յարութ Եկմանեանը:

Պարբերականը կը նկարագրէ Մերձաւոր Արեւելքի եւ առաջաւոր Ասիոյ մէջ հայկական Սփիւռքի դերը ընդգծելով՝ Իրանահայ համայնքը կ'աջակցի Իրանի հետ Հայաստանի առեւտրական կապերուն: «Հայաստանը ելք չունի դէպի ծով, անոր սահմանները փակ են Ատրպէյճանի եւ Թուրքիոյ հետ, բան մը որ Իրանի հետ իր կապը կենսական կը դարձնէ»: Թերթին պատմած է civitas հիմնադրամի տնօրէն Սալբի Ղազարեանը:

Հայաստանը քիչ օգնութիւն չէ ցուցաբերած Սուրիոյ բնակիչներուն: Վերջին ամիսներուն Երեւանէն հալէպ ուղեւորուած է մարդասիրական օգնութեամբ բեռնաւորուած երեք օդանաւ՝ Սուրիոյ հետ տեւական բանակցութիւններէն յետոյ, որով կտրուկ կերպով սահմանափակուած էր արտասահմանեան օգնութիւնն ու Թուրքիոյ հետ բանակցութիւններէն ետք, կ'եզրափակէ պարբերականը:

### ԿԱՏԱԿԻՆ ԵՒ ԽԵԼԱԳԱՐԻՆ ԶՈՐՅԵՐԸ

Շարունակում էջ 6-էն

մանուկներու եւ ուսուցիչներու պանութեան պարագան, որ նախագահ Օպամային կողմէ դատապարտուեցաւ ըսելով որ նման արարքներ կարելի չէ ընդունիլ որպէս սուրբ կամ զին մեր ազատութեան, մեզի մտածել կուտայ թէ՛:

«Ինչ ազատութիւն է սա որ «հիւանդ» մարդիկ կ'արտադրէ, եւ անոնց կուտայ իրաւունք զինուելու, եւ անհասկնալի ատելութեամբ կեանքեր խլելու եւ մահ սփռելու:

«Ինչ ազատութիւն է սա որ ընտանիքի հայր ու մայր բաժնելով, զաւակներուն կուտայ անմխիթար եւ անողնահար կեանքի մը ցուրտ իրականութիւնը:

«Ինչ ազատութիւն է սա որ նիւթով քեզ կը պատէ եւ հոգիդ կը


պարպէ: «Ինչ ազատութիւն է սա որ ամէն տեսակի արտադրութիւն քիմիական թոյնով կը խառնէ եւ առողջութիւններ կը փճացնէ:

«Ինչ ազատութիւն է սա որ կարգ մը մանուկներ տակաւին չծնած, մօր արգանդին մէջ հիւանդ կը դարձնէ, մասնազէտ կոչեցեալներու եւ դեղեր կամ աննդամթերք արտադրողներու անսանձ, ապօրէն եւ շահախնդիր գործելակերպին պատճառաւ:

Եւ տակաւին կը մղուինք մտածելու թէ սանձարձակ ազատութիւն կիրարկողներ ինչեր չեն ըներ հանրային կեանքին վտանգ հասցնելով. անգործ մարդիկ ստեղծելով, ընտանիքներ անտուն դարձնելով, եւ «հիւանդ» մարդոց հանդէպ անտարբեր գտնուելով:

**VA Print Media**  
 Book Printing • Hard Covers • Year Books  
 Restoration of Old Books & Bibles

Նոր Գիրքերու Տպագրութեան եւ  
 Հին Գիրքերու Նորոգութեան Համար  
 Հեռ.աձայնել՝ ՎԱՀԷ ԱՁԱՊԱՀԵԱՆԻՆ



**Vahe Atchabahian**  
 1870 E. Layton St. • Pasadena, CA 91104  
 626-354-5924 • vamedia@yahoo.com

**ՆՈՒՐԱՏՈՒԹԻՒՆ**

Կիւրեղ Մանկրեանի վիրաբուժական յաջող գործողութեան ենթարկուելուն առիթով, Տէր եւ Տիկ. Պօղոս Մարգարեան կատարեալ ապաքինում կը մաղթեն եւ առ այդ \$100 տոլար կը նուիրեն «Մասիս» շաբաթաթերթի ֆոնտին:

**ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ**

Եթէ ձեր տրամադրութեան տակ ունիք հայերէն գիրքեր, եւ կը ցանկաք զանոնք նուիրել Կայծ Երիտասարդական Միութեան գրադարանին՝ հաճեցէք կապ պահել մեզի հետ: G.Y.O. 1060 N.ALLEN AVE. PASADENA, CA 91104

**REQUEST FOR PROPOSALS (RFP)**

The Housing Authority of the City of Los Angeles invites proposals from qualified firms interested in the following opportunities:

**RFP 7568**  
**Banking Services**  
 (Issue 12/10/2012; Due 1/22/2013)  
 To provide banking services

**RFP 7570**  
**ERP Upgrade Strategy**  
 (Issue 12/17/2012; Due 1/22/2013)  
 To provide Enterprise Resource Planning (ERP) upgrade strategy

Copies of the RFP's may be obtained via [www.hacla.org/ps](http://www.hacla.org/ps) or call (213) 252-5405.  
 12/20, 12/27/12  
 CNS-2418434#  
 MASSIS WEEKLY

### ՍԱՐՁՂ

#### ՎԱՐԴԳԷՍ ԿԻՒԼՊԷՆԿ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

Խոր ցաւով կը գուժենք մեր ամուսինն, հօր, մեծ հօր, եղբօր, մօր եղբօր եւ հարազատին՝ ՎԱՐԴԳԷՍ ԿԻՒԼՊԷՆԿ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ-ի անակնկալ մահը, որ պատահեցաւ Ուրբաթ, 7 Դեկտեմբեր 2012-ին:

- Սգակիրներ՝
- Տիկին Լիզէթ Կիրակոսեան (Դանիա)
- Տիար Պետրոս Կիրակոսեան (Շուէտ)
- Տիար Յակոբ Կիրակոսեան (Դանիա)
- Տէր եւ տիկին Ալեքս եւ Գարոլ Ռոստոմեան եւ զաւակունք (Դանիա)
- Տէր եւ տիկին Մարուն եւ Գարոլ Շաթաթ եւ զաւակունք
- Տէր եւ տիկին Ժիրայր եւ Սիմա Կիրակոսեան (Ամերիկա)
- Տէր եւ տիկին Ռաֆֆի եւ Սիլվա Եփրեմեան (Ամերիկա)
- Տէր եւ տիկին Ռաֆֆի Կիրակոսեան (Ամերիկա)
- Տիկին Սօսի Կիրակոսեան եւ զաւակունք (Դանիա)
- Տիար Արշակ Կիրակոսեան
- Տիար Յարութ Կիրակոսեան եւ զաւակունք
- Տիար Ժողէֆ Կետիկեան եւ զաւակունք
- Տէր եւ տիկին Վարդան եւ Նաթալի Կետիկեան եւ համայն Կիրակոսեան, Ռոստոմեան, Շաթաթ, Կետիկեան ընտանիքներ եւ ազգականներ կը գուժեն իրենց

Յուղարկաւորութեան արարողութիւնը կատարուեցաւ Շաբաթ, 15 Դեկտեմբեր 2012-ին, կէսօրուան ժամը 12:00-ին, Կլան Սաքսը Գլաքը Եկեղեցւոյ մէջ, Դանիա:

### ՅԱԿԱԿՑՈՒԹԻՒՆ

ՎԱՐԴԳԷՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆԻ մահուան տիւրը առիթով Տէր եւ Տիկ. Պօղոս Մարգարեան իրենց խորագգաց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի ընտանեկան պարագաներուն եւ հարազատներուն, յատկապէս եղբօր Տէր եւ Տիկ. Ժիրայր Կիրակոսեանին: Առ այդ \$50 կը նուիրեն «Մասիս»ի ֆոնտին:

### ՀԱՃՆՈՅ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ ԿՐԹԱՆՊԱՍՏ ՀԱՃԸՆՑԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐՈՒ

Հաննոյ Հայրենակցական Միութիւնը յառաջիկայ տարեշրջանին համար կրթանպաստ պիտի տրամադրէ միջնակարգ, երկրորդական եւ համալսարանական ուսման հետեւողներուն: Դիմողները պէտք է ըլլան հանրային ծնողներու գաւակ եւ շարադրութիւն մը կցեն իրենց յառաջիկայ ծրագիրներու մասին: Թեկնածուներէն կը խնդրուի մեզի հետ հաղորդակցիլ հետեւեալ էլեկտրոնային հասցեով՝ unionofhadjin@gmail.com

### ՎԱՐՁՈՒ ՏՈՒՆ

#### PALM SPRINGS ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ԳՆԱՅՈՂ ԶԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

Փալմ Սփրինգսի գեղատեսիլ եւ կից լեռնային շրջանին, վարձու է տրուում լրիւ կահաւորուած մէկ մնջարան, մեծ նստասենեակ, խոհանոց՝ բոլոր յարմարութիւններով, մինչեւ 5-6 հոգի գիշերելու տարողութեամբ Condo: Ունի մեծ լողաւազան, ջաքուզի, թենիսի խաղաղաշտ, կանաչազարդ փիքնիքի տարածք, իր յատուկ կրակարաններով եւ 24-ժամեայ ապահովութեան սիստեմ:

Վարձման գներն են՝	
Ուրբաթ, Շաբաթ եւ Կիրակի՝	\$ 400
Long Weekend-ների համար՝	\$ 500
Մէկ շաբաթուայ համար՝	\$ 675
Մէկ ամսուայ համար՝	\$ 1450

Մանրամասների համար հեռաձայնել՝ (818) 246-0125

### ՅԱԿԱԿՑԱԿԱՆ

ՀՄԱՅՆԱԿ (ՄԱՅՔ) ԳՈՆԵԱՆԻ (կրտսեր որդին Վարդան եւ Արաքսի Գոնտուրուճեաններին) մահուան տիւրը առիթով՝ խորապէս կը ցաւակցինք իր զաւակներուն, եղբօրը՝ Յովհաննէս Գոնտուրուճեանի (Լոնտոն), եղբօրը՝ Հրաչ Գոնտուրուճեանի եւ զարմիկին՝ Բաբգէն Պոյաճեանին, (Պէյրուս) եւ իրեն ընտանիքներուն, ինչպէս նաեւ համայն ազգականներուն եւ բարեկամներուն: Խոհուն եւ ինքնատիպ անձնաւորութեան, ջերմ հոգու տէր ազգականի յիշատակը միշտ վառ պիտի մնայ մեր սրտերում: Զարմուհիները՝ Եսթեր Բաստրմաճեան Էլիզապէթ Վարդանեան եւ Վաղարշակ եւ Արթուր Սօսի Մանջիկեան եւ Սեդրակ Դաւիթ եւ ձէք Այս տիւրը առիթով հանգուցեալի զարմուհիները \$100 տուար կը նուիրեն «Մասիս»ին:

### ԶԱՅՐԵՆԻՔՆ ԸՅԼԸՆՏՐԱՆՔ ՉՈՒՆԻ

Շարունակուած էջ 15-էն

Եհովական են: Գուցէ Միե՛ր-ի դատաւորները երկրագնդի վրայ գիտեն այն տարածքների տեղը, որտեղ բացառուած են պատերազմները, եւ ուրեմն պէտք է մէկից պաշտպանուել ու գէնք կրել: Այդ դէպքում աւելի արդարացի կը լինէր պատերազմական վիճակում գտնուող երկրին տուգանելու փոխարէն եհովականներին այդ տարածքները գործողել: Բանն այն է, որ Եհովայի վկաները, հաշուի առնելով իրենց կրօնական համոզմունքները, դիմել էին ՀՀ իշխանութիւններին՝ ինդերելով կիրառել 2004թ. ընդունուած «Այլընտրանքային ծառայութեան մասին» օրէնքը, քանի որ իրենք չեն կարող գէնք կրել: Ընդառաջելով, պատկան մարմինները նրանց տեղաբաշխել են ՀՀ ԶՈՒ տարբեր ստորաբաժանումներում, որոնք առնչութիւն չունեն գէնք ու գինամթերքի հետ: Սակայն մէկ տարի անց՝ 2005 թ., Եհովայի վկաները յայտարարել են, որ այդ հաստատութիւնները նոյնպէս գտնուում են ՀՀ գինուած ուժերի վերահսկողութեան տակ, ուստի կրկին անհնար են համարում իրենց յետագայ ծառայութիւնը: Միե՛ր-ը, առաջնորդուելով խղճի ազատութեան մասին հռչակագրի դրոյթներով, իր այս վճռով փաստացի շրջանցում է ժողովրդավարութեան հիմնարար՝ օրէնքի առջեւ բոլորի հաւասար լինելու սկզբունքը: Հայ ժողովուրդը միշտ էլ ձգտել է Եւրոպա, դէպի Եւրոպական արժէքներ, ինչը պայմանաւորուած է հայերի մշակութային ու հոգեւոր դաստիարակութեամբ եւ աւանդութիւններով: Սակայն ինչպէս եւ միւս եւրոպական տէրութիւնները, Հայաստանն էլ իր ազգային շահերն ունի եւ պարտաւոր է առաջնորդուել այդ շահերի թելադրանքով: Բնականաբար, «ոչ պատերազմ, ոչ խաղաղութիւն» կարգավիճակում յայտնուած երկիրը չի կարող իրեն շուրջը թելադրելու՝ հանդուրժելու Եհովական քմահաճոյքները, ինչը վտանգաւոր նախադէպ կարող է հանդիսանալ նրանց համար, ովքեր փորձել եւ փորձելու են խուսափել գինուորական ծառայութիւնից: Բացառուած չէ, որ գինակոչի տարիքի երիտասարդների շրջանում աւելանան Եհովականները, նոյնիսկ եթէ նրանցից շատերը չիմանան էլ ով է Եհովան: Այս եւ նմանատիպ հետեւանքներից խուսափելու համար Հայաստանը Միե՛ր-ին բացատրական եւ մի քիչ էլ կտրուկ նախազուշտացումից բացի, պիտի վերանայի «Այլընտրանքային ծառայութեան մասին» օրէնքի դրոյթները: Ինչպէս հայրենիքին այլընտրանք չի կարող լինել, նոյնպէս սուրբ ու եզակի պարտաւորութիւն է նրա պաշտպանութիւնը:

**OFFICES FOR RENT IN PASADENA**

**ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ**

1060 North Allen Ave  
Pasadena, CA 91104

Գրասենեակները վերանորոգուած եւ յարմար վարձքերով Զետաքրքրուողներէն հեռաձայնել՝ (626) 398-0506

**ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ**

**ՓԱՍՍԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ԸՈԳԻ ԸԱՍԱՐ)**

ԱՄԸ ՏԵՍԱԿ ԱՌԻՅԵՐՈՒ ԸԱՍԱՐ  
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104

ԱՆՐԱՍԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝  
ԸՆՈՒՁԱՅՆԵԼ (626) 797-7680

ԲՈՆՑՔԱՍԱՐՏԻ ԵՐՈՊԱՅԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

ԿՈՐԻՒՆ ՍՈՂՈՍՈՆԵԱՆԸ՝ ՈՍԿԷ ՄԵՏԱԼԱԿԻՐ

Աւարտուել է Կալինինգրադում ընթացող բռնցքամարտի Եւրոպայի 19-22 տարեկանների առաջնութիւնը, որին մասնակցում էր նաեւ Հայաստանի հաւաքականը:



49 կգ քաշային կարգի եզրափակիչում, Կորիւն Սողոմոնեանը 11:10 հաշուով յաղթանակ տօնեց իռլանտացի բռնցքամարտիկ Հիւզ Մայրեսի նկատմամբ եւ հռչակուեց Եւրոպայի ախոյեան:

56 կգ քաշային Արաւ Աւագյանը Հայաստանի համար նուաճեց արծաթէ մետալ: Եզրափակիչում հայ բռնցքամարտիկը պարտուեց ռուսաստանցի Վլադիմիր Նիկիտինին:

52 կգ քաշային Նարեկ Աբգարեանը բաւարարուեց պրոնզէ մետալով: Հայաստանի ներկայացուցիչը կիսանզրափակիչում 10:23 հաշուով պարտուեց ռուսաստանցի Վասիլի Վետկինին:

ԱՐԹՈՒՐ ԱԲՐԱՋԱՍԸ ՊԱՇՏՊԱՆԵՑ ՏԻՏՂՈՍԸ



Գերմանիան ներկայացնող Արթուր Աբրահամը պաշտպանեց պրոֆեսիոնալ բռնցքամարտի սուպեր միջին քաշային կարգում WBO վարկածով աշխարհի ախոյեանի տիտղոսը:

Դեկտեմբերի 15-ին Գերմանիայի Նիւրնբերգ քաղաքում կայացած մենամարտում 32-ամեայ Աբրահամը տեխնիական նոկաուտով առաւելութեան հասաւ աշխարհի ախոյեանի յաւակնորդ, ֆրանսացի Մեհդի Բուադլայի նկատմամբ: Մենամարտն աւարտուեց 8-րդ ռաունդում:

1-4-րդ ռաունդներում ֆրանսացին բաւական ակտիւ էր եւ գրեթէ չէր զիջում Աբրահամին, սակայն հայ բռնցքամարտիկն աստիճանաբար տիրեց նախաձեռնութեանը: Բուադլան մի քանի ուժգին հարուածներ բաց թողեց եւ ստացաւ դէմքի վնասուածք, որի պատճառով մրցավարն 8-րդ ռաունդում դադարեցրեց մենամարտը՝ յաղթանակը շնորհելով Աբրահամին:

Արթուր Աբրահամն առաջին անգամ պաշտպանեց գերմանացի Ռոբերտ Շտիպլիցի իւրած WBO վարկածով ախոյեանութեան գոտին:

ԼԵՒՈՆ ԱՐՈՆԵԱՆՆ ԱՌԱՋԻՆՆ Է ԿՈՅՐ ՇԱԽՄԱՏՈՒՄ

Չինաստանում աւարտուել է Համաշխարհային մտաւոր խաղերը: Կոչր շախմատի մրցաշարում, Հայաստանի առաջատար շախմատիստ Լեւոն Արոնեանը վաստակեց 5,5 միաւոր եւ արժանացաւ յաղթողի կոչմանը: Հայ գրոսմաստերը կէս միաւոր աւելին վաստակեց ԱՄՆ-ը ներկայացնող Հիկարու Նակամուրայից:



Յաւելենք, որ կանանց կոչր շախմատին մասնակցում էր էլինա Դանիէլեանը, ով վաստակելով 3,5 միաւոր՝ կիսեց 7-11 հորիզոնականները: Առաջին տեղը զբաղեցրեց Հօւ Իֆանը (6 մ.):

ՖԻՖԱ. ՀԱՅԱՍՏԱՆԸ ԲԱՐԵԼԱԲԵԼ Է ԴԻՐՔԸ

ՖԻՖԱ-ի դասակարգման աղիւսակում ֆուտպոլի Հայաստանի ազգային հաւաքականը յառաջադիմել է 7 աստիճան: Դեկտեմբերի 19-ին հրապարակուած աղիւսակում վարդան Մինասեանի խումբը 457 միաւորով զբաղեցնում է 75-րդ տեղը:



Առաջատարն աշխարհի եւ Եւրոպայի ախոյեան Սպանիայի հաւաքականն է: Գերմանիան երկրորդն է, Արժենթինան եզրափակում է լաւագոյն եռեակը:

Աշխարհի 2014 թ. առաջնութեան ընտրական փուլում Հայաստանի հաւաքականի մրցակիցներ իտալիան զբաղեցնում է չորրորդ տեղը, Դանիան՝ 23-րդ, Չեխիան՝ 29-րդ, Պուլկարիան՝ 50-րդ, իսկ Մալթան՝ 146-րդ:

ՖԻՖԱ. վարկանիշային աղիւսակ

1. Սպանիա	-	1606 միաւոր
2. Գերմանիա	-	1437
3. Արժենթինա	-	11290
4. Իտալիա	-	1165
5. Գոլոմպիա	-	1164
6. Անգլիա	-	1151
7. Պորտուգալիա	-	1144
8. Հոլանտա	-	1124
9. Ռուսաստան	-	1070
10. Խրուաթիա	-	1064
23. Դանիա	-	8210
29. Չեխիա	-	7816
50. Պուլկարիա	-	585
73. Վրաստան	-	481
75. Հայաստան	-	457
128. Ատրպէյճան	-	277
146. Մալթա	-	178

LIQUIDATION SALE!

Gianni Ladies Fashion LATEST EUROPEAN STYLES

50-75% OFF ENTIRE STORE

Everyday Dresses • Evening Gowns Accessories • Shoes • Belts



Store Closing... Everything Must Go! 6412 Hollywood Blvd. Los Angeles, CA 90028 (323) 462-2090

Հայ news.am logo and HayastanInfo.net website address.